ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ

ՀՐԱՄԱՆ №_8_

«03»_____02_____ 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան 2022 թվականի հունվարի 27-ի նիստում քննարկել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում ՀՀ գլխավոր դատախազի 08.11.2021թ. N 78 հրամանի հիման վրա անցկացված համալիր ստուգման արդյունքները և ընդունել համապատասխան որոշում, որի կենսագործումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 22-րդ հոդվածի 5-րդ մասով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Ապահովել Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2022 թվականի հունվարի 27-ի նիստում ընդունված որոշման կենսագործումը (27.01.2022թ. նիստի N 1 արձանագրությունը կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Արձանագրություն N 1

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2022 թվականի հունվարի 27-ի նիստի

Նախագահում էր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը:

Մասնակցում էին կոլեգիայի անդամներ՝ Հ.Ասլանյանը, Վ.Հարությունյանը, Ա. Աֆանդյանը, Գ. Բաղդասարյանը, Ս. Գալյանը, Ս. Հովհաննիսյանը, Վ. Ջանազյանը, Ա. Հարությունյանը, Ա. Գրիգորյանը, Ա. Սիմոնյանը, Ա. Առաքելյանը, Ա.Փանոսյանը, Ա. Չախոյանը, Ա. Մարտիրոսյանը, Ա.Մարուխյանը, Վ.Ռաֆայելյանը, Լ. Չարխիֆալակյանը, Ե.Ավագյանը, Ս. Ամիրխանյանը:

Ներկա էին՝ ՀՀ զինվորական դատախազի տեղակալները, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազները, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներն ու դատախազը, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերը, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականներն ու օգնականները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում իրականացված համալիր ստուգման արդյունքների ամփոփում:
2. Դատախազների երդման արարողություն:

Զեկուցող՝
ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ Ա. Մարուխյան:

Լսեցին՝ Ա. Մարուխյանին:

Արտահայտվեցին՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Աֆանդյանը. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Դ. Վեքիլյանը:

Լսելով և քննարկելով Ա. Մարուխյանի զեկուցումը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում իրականացված համալիր ստուգման արդյունքների մասին՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021թ. նոյեմբերի 8-ի թիվ 78 հրամանի համաձայն ստեղծված հանձնախմբի կողմից Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում իրականացվել է 2020 թվականի և 2021 թվականի 10 ամիսների ընթացքում դատախազական

լիազորությունների իրականացման և գործունեության կազմակերպման հարցադրումներով համալիր ստուգում: Համալիր ստուգումն իրականացվել է ըստ դատախազական գործառույթների առանձին ուղղությունների:

Այսպես, **Հայաստանի Հանրապետության ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության թիվ 1495-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչների կիրառման պահպանումը** ստուգելու, ինչպես նաև վերը նշվածի կապակցությամբ դատախազական հսկողության արդյունավետությունը պարզելու նպատակով ստուգման ժամանակահատվածում ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից կազմված 2020թ. և 2021թ. 10 ամիսների գրանցամատյանները:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածի գրանցամատյանները Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության կողմից պարբերաբար ստուգվել են, սակայն այդ ստուգումները կրել են ձևական բնույթ, քանի որ դրանց արդյունքում որևէ դեպքով, որը ստուգում իրականացրած ոստիկանության ծառայողի զեկուցագրի հիման վրա թողնված է եղել անհետևանք, դատախազների կողմից հանձնարարություն չի տրվել մուտքագրել ոստիկանության ավտոմատացված տեղեկատվական համակարգի օպերատիվ հաղորդագրությունների հաշվառման շտեմարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով դրանց ընթացքը լուծելու նպատակով:

Մինչդեռ ուսումնասիրության ընթացքում ի հայտ են եկել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու մասին ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ սահմանված կարգի մի շարք խախտումներ, մասնավորապես՝ հանցագործության առերևույթ բազմաթիվ դեպքեր դիտվել են որպես վարչական իրավախախտումներ կամ պատահարներ և թողնվել անհետևանք, որոնցից 36-ով /հիմնականում 2021թ. դեպքերով/ ստուգման արդյունքում հանձնարարվել է դեպքերը հաշվառել ոստիկանության ավտոմատացված տեղեկատվական համակարգի օպերատիվ հաղորդագրությունների հաշվառման շտեմարանում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով դրանց ընթացքը լուծելու նպատակով, իսկ մի քանի տասնյակ այլ դեպքերով նմանատիպ հանձնարարություն չի տրվել՝ դրա արդեն իսկ ժամանակավրեպ լինելու պատճառով:

Մասնավորապես.

1. 2021 թվականի օգոստոսի 16-ին՝ ժամը 09:20-ին, ոստիկանության ՕԿԿ-ից ահազանգ է ստացվել ոստիկանության Մալաթիայի բաժին այն մասին, որ իրենց է զանգահարել Արգինե Զավենի Զաքարյանը և հայտնել, որ իր <<Ինստագրամյան>> էջը կոտրել են:

Ահազանգի վերաբերյալ վերջինս ոստիկանության Մալաթիայի բաժնում բացատրություն է տվել այն մասին, որ 2021 թվականի օգոստոսի 15-ին՝ ժամը 18:00-ին փորձել է մուտք գործել իր <<Ինստագրամյան>> էջը, սակայն չի կարողացել: Առավոտյան ժամը 07-ի սահմաններում, իր քրոջ էջով տեսել է, որ իր էջում 2 ժամ առաջ մուտք է եղել և նայել են իր նամակները: Նշել է նաև, որ իր անձնական էջի տվյալները որևէ մեկին չի փոխանցել, իսկ իր էջում առկա են եղել անձնական տվյալներ:

Ոստիկանության Մալաթիայի բաժնի ԱԳ և ԸԲԿ բաժանմունքի ավագ տեսուչ Լ.Հարությունյանի զեկուցագրի հիման վրա, բաժնի պետ Ա.Մելոյանի թույլտվությամբ նախապատրաստված նյութերը թողնվել են անհետևանք և կցվել կարգագրին այն

պայմաններում, երբ առկա են եղել ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասով քրեական գործ հարուցելու առիթն ու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից՝ ստուգման ընթացքում հանձնարարվել է նյութերն ուղարկել ոստիկանության Մալաթիայի բաժին՝ ընթացքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածով սահմանված կարգով լուծելու համար:

Արդյունքում, փաստի առթիվ նախապատրաստված նյութերով ոստիկանության Մալաթիայի բաժնում 2021 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով և 254-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 16762721 քրեական գործը:

2. 15.05.2021թ.՝ ժամը 05.30-ին, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՕԿԿ-ից ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին ահազանգ է ստացվել, որ իրենց է զանգահարել Արթուր Բաղդասարյանը և հայտնել ՃՈ-ում վերջինիս 80 տեսուչներով ծեծելու, գլուխը վնասված լինելու և դատաբժշկի կարիք ունենալու վերաբերյալ:

Նշված ահազանգը որպես պատահար գրանցվել է ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների մասին հաղորդումների գրանցամատյանում և կատարված ստուգողական գործողությունների արդյունքում ստեղծված նյութերը նույն բաժնի օպերլիազորի զեկուցագրի հիման վրա 19.05.2021թ. թողնվել են անհետևանք:

Նկատի ունենալով, որ Արթուր Բաղդասարյանի ահազանգի վերաբերյալ ստեղծված նյութերն առերևույթ պարունակել են ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթադրյալ հանցագործության հատկանիշներ, ստուգման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազին զեկուցագիր է ներկայացվել՝ դեպքը վերահաշվառելու և նյութերի ընթացքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով լուծելու համար:

Դրա հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախապատրաստվել են նյութեր, որոնց արդյունքում նյութերով 23.12.2021թ. որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ ՀՀ քրեական դատավարության 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով: Միաժամանակ, դեպքի առթիվ նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի կողմից իր լիազորություններն իրականացնելիս հայտնաբերվել են նույն դեպքի ընթացքում Արթուր Բաղդասարյանի կողմից ենթադրյալ խուլիգանություն կատարելու մասին տվյալներ, որի վերաբերյալ վերջինիս կողմից քննչական բաժնի պետին ներկայացված զեկուցագրի հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով 14.01.2022թ. հարուցվել է քրեական գործ:

Բացի այդ, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության աշխատակիցների կողմից հիշյալ դեպքին օրենքով սահմանված կարգով ընթացք տալու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու, վերջիններիս կողմից առերևույթ ոչ իրավաչափ վարքագիծը ծառայողական քննության շրջանակներում պարզելու նպատակով նյութերից առանձնացված պատճեններն ուղարկվել են ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչություն, որտեղ իրականացված ծառայողական քննության արդյունքում հաստատվել է Է.Մաթևոսյանի և Ա. Ղազարյանի կողմից կարգապահական խախտում թույլ տալու հանգամանքը:

3. 29.08.2021թ. ՀՀ ոստիկանության ՕԿԿ-ից ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին հաղորդում է ստացվել, որ իրենց է զանգահարել Ա. Ղազարյանը և հայտնել, որ Մալաթիա տոնավաճառի «Գոռ» խանութից մի փոքր ներքև, դեղին վերնահագուստով, միջին հասակի, թմբլիկ կառուցվածքով մի կին իր պայուսակից գողացել է իր դրամապանակը:

Նշված հաղորդումը գրանցվել է գրանցամատյանում, իսկ 30.08.2021թ. Ա. Ղազարյանը արդեն բացատրություն է տվել, որ Մալաթիա տոնավաճառում գնումներ կատարելիս, երբ խանութներից մեկից դուրս է եկել, նկատել է, որ դրամապանակը չկա: Այդ պահին շփոթված և խուճապահար զանգել է ոստիկանություն և հայտնել, որ դրամապանակը գողացել են, սակայն չի կարող հստակ ասել՝ գողացել են, թե ինքն է ինչ որ տեղ թողել: Պայուսակի մեջ եղել է 20.000 ՀՀ դրամ, աղջկա և ամուսնու սոցիալական քարտերը: Բացատրություն վերցնելիս հարց չի տրվել հաղորդման մեջ նշված միջին հասակի, թմբլիկ կառուցվածքով կնոջ մասին, միջոցներ չեն ձեռնարկվել դեպքի վայրում տեսանկարահանող սարքերի առկայությունը պարզելու ուղղությամբ:

Նման պայմաններում հաղորդումը կցվել է շարք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր չեն նախապատրաստվել, Ա. Ղազարյանի ընդունելություն վարչական շրջանի դատախազությունում չի կազմակերպվել:

4. 02.01.2021թ. ՀՀ ոստիկանության ԵՔՎ ՕԿԿ-ից ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին հաղորդում է ստացվել, որ իրենց է զանգահարել Ա. Ավդալյանը և հայտնել, որ տան ճաղավանդակները կոտրել են և կատարել գողություն:

Նման պայմաններում, առանց դեպքի վայրի զննություն կատարելու միջոցով ճաղավանդակի կոտրված լինելու կամ չլինելու, ինչպես նաև որևէ մեկի կողմից բնակարան մուտք գործելու և գողությունը կատարելու հանգամանքները ստուգելու, հիմք ընդունելով Ա.Ավդալյանի՝ հաղորդմանը հակասող բացատրությունն այն մասին, որ գողություն չի եղել, իսկ ճաղավանդակը կինն է բաց թողել, հաղորդումը կցվել է շարք՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր չեն նախապատրաստվել:

Բացի այդ, արձանագրվել են նաև դեպքեր, երբ ստանալով քաղաքացիների դիմումները, ահազանգերը՝ ոստիկանության աշխատակիցները ձեռնարկել են որոշակի դատավարական գործողություններ /օրինակ բացատրություններ են վերցրել/, որոնք ուղղված են եղել դրանցում պարունակվող տեղեկությունները քննարկելուն, ստուգելուն և լուծելուն, որից հետո, սակայն, դիմումը կամ ահազանգը թողնվել է անհետևանք, ինչը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/0635/11/19 գործով արտահայտած դիրքորոշմանը, համաձայն որի, եթե դիմումի քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված ձեռնարկվում են որոշակի դատավարական գործողություններ, ապա վարույթն իրականացնողի մոտ պարտավորություն է առաջանում դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը:

Ստուգմամբ պարզվել է նաև, որ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից մի շարք դեպքերում տարբերակված մոտեցում է դրսևորվել նույնաբովանդակ հաղորդումները գրանցելիս և դրանց ընթացքը լուծելիս:

Մասնավորապես, *ընտանիքում բռնության վերաբերյալ ահազանգերը, բջջային հեռախոսների, դրամապանակների գողության-կորցնելու* մի շարք դեպքեր զեկուցագրու թողնվել են անհետևանք, մյուս դեպքերում՝ դրանց ընթացքը լուծվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով:

Ընդ որում, վարչական շրջանի դատախազության դատախազների կողմից **չեն պահպանվել ՀՀ դատախազության կոլեգիայի 27.10.2017թ. նիստի 2-րդ հարցի որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի պահանջները,** որի համաձայն՝ հանցագործությունների և պատահարների մասին ստուգման կարիք ունեցող տեղեկությունների, ահազանգների գրանցման թիվ 2 մատյանների ուսումնասիրությամբ պետք է վեր հանել այն դեպքերը, երբ գողության մասին ահազանգողը կամ այլ անձ հետո հայտնում է գույքի՝ ոչ թե գողացված, այլ կորած-գտած լինելու մասին և անհրաժեշտության դեպքում իրականացնել կոնկրետ անձի

ընդունելություն և ըստ անհրաժեշտության ձեռնարկել դատախազական ներգործության համապատասխան միջոցներ: Հանցագործությունների և պատահարների մասին ստուգման կարիք ունեցող տեղեկությունների, ահազանգների գրանցամատյանների ուսումնասիրությամբ դատախազների կողմից որևէ նման դեպք վեր չի հանվել /չնայած բազմաթիվ նման դեպքերի առկայության/ և քաղաքացիների ընդունելություն չի կազմակերպվել: Ավելին, դատախազների կողմից ոչ մի ընդունելություն չի կազմակերպվել նաև այն դեպքերով, երբ քաղաքացին նախ հաղորդում է տվել, որ իր գույքը՝ հեռախոսը, դրամապանակը, գողացել են, սակայն բացատրություն տալիս արդեն հայտնել է, որ իրականում կորցրել է և դրա հիման վրա դեպքի առթիվ նյութեր չեն նախապատրաստվել:

Պետք է փաստել, որ որևէ ընդունելություն չի կատարվել նաև այն դեպքերով, երբ քաղաքացին ահազանգել է ոստիկանություն ընտանեկան բռնության մասին, սակայն հետո այլ տվյալներ է հայտնել և դեպքի առթիվ նյութեր չեն նախապատրաստվել:

Համալիր ստուգման ընթացքում ուսումնասիրվել են ընդհանուր առմամբ 1899 նյութ, որոնցով որոշումներ են կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին, որից 911 նյութ նախապատրաստված են եղել 2020թ. ընթացքում, իսկ 988 նյութ՝ 2021թ. 10 ամիսների ընթացքում:

Ուսումնասիրված նյութերից 9-ով ՀՀ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու վերաբերյալ, որոնցից 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով, 1-ը՝ 110-րդ հոդվածի 1-ին մասով, 1-ը՝ 118-րդ հոդվածով և 170-րդ հոդվածի 1-ին մասով, 1-ը՝ 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 1-ը՝ 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով /երկու դրվագ/, 1-ը՝ 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 1-ը՝ 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 1-ը՝ 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով::

Բացի այդ, համալիր ստուգման արդյունքում պարզվել է, որ 2021թ. 10 ամիսների ընթացքում մի շարք նյութեր նախապատրաստվել են թերի և մակերեսորեն, իսկ որոշ դեպքերով նշված խախտումները **թեև էական են եղել, իսկ կայացված որոշումներն էլ՝ ապօրինի, սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով սահմանված 6-ամսյա ժամկետը լրացված լինելու պատճառով ՀՀ գլխավոր դատախազի կողմից չեն վերացվել: Այսպես.**

Արձանագրվել են դեպքեր, երբ նախապատրաստված նյութերը մերժվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ դիմողի բողոքի բացակայության հիմքով, այն պայմաններում, երբ բացակայել է ենթադրյալ հանցանք կատարած անձի՝ իր նկատմամբ ոչ արդարացնող հիմքով որոշում կայացնելու վերաբերյալ համաձայնությունը:

Այսպես. **Արուսյակ Մնացականյանի հաղորդման հիման վրա** նախապատրաստված նյութերով 2020թ. հուլիսի 1-ին որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին բողոքի բացակայության պատճառաբանությամբ:

Նյութերի նախապատրաստմամբ վարույթն իրականացնող մարմինը հիմնավորված է համարել, որ Տիգրան Գասպարյանի արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն հաշվի առնելով, որ Արուսյակ Մնացականյանը բողոք չունի, ուստի հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, որոշում է կայացրել քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում կայացնելիս հետաքննության մարմինը միջոցներ չի ձեռնարկել ստանալու Տիգրան Գասպարյանի համաձայնությունը վերջինիս նկատմամբ ոչ արդարացնող հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Արդյունքում, վարույթն իրականացնող մարմնի կողմից Տիգրան Գասպարյանի նկատմամբ ոչ արդարացնող հիմքով կայացվել է որոշում՝ առանց վերջինիս համաձայնությունն ունենալու:

Հատկանշական է, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը Տիգրան Գասպարյանին չի ուղարկվել:

Նմանատիպ իրավիճակ է նաև **Նարինե Գասպարյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով:**

Տվյալ դեպքով, վարույթն իրականացնող մարմինը հաստատված է համարել, որ Լ.Եղիազարյանի արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմի հատկանիշներ, և հաշվի առնելով, որ Ն.Գասպարյանը բողոք չի ունեցել, իսկ Լ.Եղիազարյանն էլ ընդունել է իրեն մեղսագրվող արարքի կատարումը, ուստի որոշում է կայացրել քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ բողոքի բացակայության պատճառաբանությամբ:

Վարույթն իրականացնող մարմինն անտեսել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներն այն մասին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով քրեական գործ հարուցելը մերժելիս պարտադիր պայման է հանդիսանում ոչ թե ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից արարքի կատարումն ընդունելը, այլ՝ իր նկատմամբ ոչ արդարացնող հիմքով որոշում կայացնելու վերաբերյալ վերջինիս համաձայնությունը:

Տվյալ դեպքում, թեև Լ.Եղիազարյանն ընդունել է իր կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցանքի կատարումը, սակայն վերջինս համաձայնություն չի տվել ոչ արդարացնող հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին: Ավելին, վերջինս բացատրություն է տվել, որ ցանկանում է քրեական գործ հարուցվի և կատարվի նախաքննություն:

Նման պայմաններում, վարույթն իրականացնող մարմինն իրավասու չէր որոշում կայացնելու քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Հատկանշական է, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը Լյուդվիգ Եղիազարյանին չի ուղարկվել, որպիսի հանգամանքը կրկին կոպիտ քրեադատավարական խախտում է:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ նախապատրաստված նյութերը մերժվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ դիմողի բողոքի բացակայության հիմքով, այն պայմաններում, երբ տուժողները հանդիսացել են իրավաբանական անձիք, իսկ ենթադրյալ գողություններ կատարած անձի դեմ բողոք չունենալու վերաբերյալ դիրքորոշումներ են հայտնել տուժող ՍՊ ընկերությունների աշխատակիցները /մենեջեր, սրահի տնօրեն և այն/, ովքեր նման իրավասություն չեն ունեցել և լիազորված չեն եղել տուժող ընկերության անունից հանդես գալու կամ դիրքորոշում հայտնելու, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը՝ իրեն տրված լիազորագրում այդ մասին հատուկ նշված դեպքերում, ինչպես նաև քաղաքացիական հայցվորի կամ քաղաքացիական պատասխանողի շահերն ի պաշտոնե ներկայացնող, իր իրավասության սահմաններում գործող համապատասխան իրավաբանական անձի ղեկավարն իր լիազորողի անունից, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

1) հետ վերցնել իր լիազորողի նկատմամբ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ ներկայացված բողոքը.

2) հաշտվել կասկածյալի, մեղադրյալի հետ...», իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչն իրավունք չունի կատարել լիազորողի շահերին հակասող որևէ գործողություն:

Նշված դեպքերով նախապատրաստված նյութերում առհասարակ բացակայել է լիազորագիրը կամ ՍՊ ընկերության տնօրենի կողմից համապատասխան գրությունը հանցագործությամբ պատճառված վնասի մասով բողոք չունենալու վերաբերյալ և նման պայմաններում ընկերության չլիազորված աշխատակիցների ներկայացված դիմումները իրավաչափ չեն եղել ու չէին կարող հիմք հանդիանալ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումներ կայացնելու համար:

Գագիկ Միքայելյանի, Արթուր Մարտիրոսյանի, Էդվարդ Վարդանյանի, Անդրանիկ Հովհաննիսյանի, Հայկ Բդոյանի, Գնել Գևորգյանի, Դավիթ Ղազարյանի կողմից տրանսպորտային միջոցը՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքը կասեցված վիճակում վարելու դեպքերի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է առանց վերջիններիցս բացատրություն վերցնելու, առանց ստուգելու՝ վերջիններս տրանսպորտային միջոցը վարել են տրանսպորտային միջոց վարելու իրավունքը կասեցված լինելու մասին տեղեկացված լինելով, թե ոչ: Որոշումները հիմնավորվել են նրանով, որ փաստաթղթերի ուսումնասիրությամբ որևէ տվյալ ձեռք չի բերվել, որ վերջիններս տեղյակ են եղել դրա մասին:

Վերը նշված բոլոր դեպքերում լրացած են եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով նախատեսված ժամկետները՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները վերացնելու և քրեական գործ հարուցելու համար, ուստի կայացված որոշումները չեն վերացվել:

Արձանագրվել է նաև նույն դեպքի առթիվ երկու անգամ նյութ նախապատրաստելու դեպք: Այսպես.

06.07.2020թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Կարինե Ստեփանյանի դիմումը՝ ամուսնու որդիների կողմից իրեն բռնաբարելու վերաբերյալ: 08.07.2020թ. դիմումը ուղարկվել է քննչական բաժին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր նախապատրաստելու հանձնարարությամբ: 31.07.2020թ. որոշում է կայացվել Կ.Ստեփանյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին, որի օրինականությունը ստուգվել է վարչական շրջանի դատախազությունում: Այնուհետև, 30.10.2020թ. վարչական շրջանների դատախազությունում ստացվել է Կ.Ստեփանյանի նույնաբովանդակ դիմումը, որը կրկին ուղարկվել է է քննչական բաժին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածների կարգով նյութեր նախապատրաստելու հանձնարարությամբ:

13.11.2020թ. որոշում է կայացվել Կ.Ստեփանյանի դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին, որի օրինականությունը ստուգվել է վարչական շրջանի դատախազությունում:

Այսպիսով, Կ.Ստեփանյանի կողմից ներկայացված երկու նույնաբովանդակ դիմումների վերաբերյալ, երկու տարբեր նյութեր են նախապատրաստվել: Երկու դեպքում էլ հսկողությունն իրականացրել է նույն դատախազը:

Իրականացված ստուգումների արդյունքներով պարզվել է նաև, որ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից պարբերաբար խախտվել են քրեական գործ հարուցելու փուլում ոստիկանության և դատախազության գործունեությունը կարգավորող դատավարական նորմերով սահմանված իմպերատիվ պահանջները, հիմնականում

ժամկետները, որոնց պատճառով արդեն իսկ անհնար և ձևական է դարձել դատախազական գործառույթների իրականացումը:

Այսպես, **մի շարք դեպքերում չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին կետը,** որի համաձայն հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Այսպես.

27.11.2020թ. Ծ.Հովակիմյանը հաղորդում է տվել, որ 2020թ. հունիս և օգոստոս ամիսներին ոմն Ռաֆայելը ԱՄՆ-ից ՀՀ վերադառնալու ավիատոմս գնելու պատրվակով խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով իրենից հափշտակել է մոտ 1.330.000 ՀՀ դրամ գումար: Նման պայմաններում թիվ 16962020 քրեական գործը հարուցվել է 09.12.2021թ.:

Բացառությամբ ընդամենը մի քանի դեպքի՝ **չի պահպանվել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 4-րդ կետը,** որի համաձայն հետաքննության մարմինը կամ քննիչը պարտավոր է նույն հոդվածի 1-ին մասում նշված 10-օրյա ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը, ինչպես նաև նյութերը հսկող դատախազին ներկայացնել այդ ժամկետը լրանալու օրվանից առնվազն երկու օր առաջ:

Կարապետ Թորոսյանի կողմից 2021 թվականի մարտի 20-ին ոստիկանության Մալաթիայի բաժնում կամովին ռազմաթերք հանձնելու դեպքի առթիվ նախապատրաստվող նյութերով 8-րդ օրը՝ 28.09.2021թ. միջնորդություն է կազմվել՝ ժամկետը 20 օրով երկարացնելու վերաբերյալ, որը դատախազություն ելքագրվել է միայն նյութերի նախապատրաստման 19-րդ օրը՝ 08.04.2021թ., իսկ դատախազությունում ստացվել է 23-րդ օրը՝ 12.04.2021թ.:

Նյութերով քրեական գործ հարուցելը մերժվել է 19.04.2021թ., որը դատախազությունում ստացվել է 16 օր անց՝ 05.05.2021թ.:

Ստեփան Միքայելյանի վերաբերյալ նախապատրաստվող նյութերով ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը դատախազություն է ուղարկվել դրա նախապատրաստման 23-րդ օրը: Միջնորդությամբ ստացված նյութերը վերադարձվել են դրանց նախապատրաստման միայն 33-րդ օրը՝ 22.01.2021թ., սակայն քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կայացվել է 20.01.2021թ. այն դեպքում, երբ փաստացի դրանք հետաքննիչի մոտ չեն եղել, այլ ստացվել են միայն 2 օր անց:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ կայացվել են հետաքննության ժամկետը երկարացնելու մասին որոշումներ, սակայն դրանք դատախազությունում մուտք չեն եղել: Այսպես, 09.11.2020թ. ժամը 19.20-ին Գ.Կիրակոսյանը ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը ժամը 14.00-ին Ս.Բարսեղյանը և մի խումբ անձինք ծեծի են ենթարկել իրեն և պատճառել մարմնական վնասվածքներ:

Գ.Կիրակոսյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով 09.12.2020թ. ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Քրեական գործում առկա է նյութերի հետաքննության ժամկետը երկարացնելու մասին հետաքննիչի 17.11.2020թ. միջնորդություն, սակայն այդ միջնորդությունը և նյութերը դատախազությունում մուտք լինելու մասին ոչ քրեական գործում, ոչ էլ քրեական գործի հսկողական վարույթում որևէ ապացույց չկա:

Արձանագրվել են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ **քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման պատճենը**

24 ժամվա ընթացքում համապատասխան դատախազին ուղարկելու իմպերատիվ պահանջի խախտման բազմաթիվ դեպքեր: Այսպես.

Լ.Գրիգորյանի մարմնական վնասվածք ստանալու դեպքի առթիվ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը կայացվել է 2021թ. հունիսի 10-ին, սակայն նյութերը Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն է մուտքագրվել շուրջ 1 ամիս անց՝ 2021թ. հուլիսի 8-ին:

Համալիր ստուգման արդյունքում պարզվել է, որ 2021թ. 10 ամիսների ընթացքում ընտանեկան բռնության վերաբերյալ նախապատրաստված 3 նյութերով որոշումներ են կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ բողոքի բացակայության հիմքով:

Նշված դեպքերով դատախազների կողմից խախտվել են ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարականի՝ ընտանիքում բռնության՝ մասնավոր մեղադրանքի յուրաքանչյուր դեպքի ստուգման օրինականության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի կիրառման վերաբերյալ ուղեցույցի պահանջները:

Ընտանիքում բռնության յուրաքանչյուր դեպքով պարտադիր կերպով պատշաճ կերպով չի ստուգվել բռնության ենթարկվածի՝ անօգնական վիճակում գտնվելու կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի առկայությունը:

Ստուգմամբ պարզվել է նաև, որ մի շարք դեպքերում նյութերի նախապատրաստման ընթացքում դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումներում **վարույթն իրականացնող մարմինը բավարար ելակետային տվյալներ չի ներկայացրել փորձագետներին** անձանց կողմից մարմնական վնասվածքներ ստանալու մեխանիզմի վերաբերյալ կամ բավարար ելակետային տվյալներ տրամադրված լինելու պայմաններում փորձագետները չեն անդրադարձել վնասվածք ստանալու մեխանիզմին, ինչի արդյունքում մի շարք դեպքերում՝ օրինակ ծանր մարմնական վնասվածքներ ստացված լինելու պայմաններում, ի վերջո հնարավոր չի եղել պարզել նշված վնասվածքն անձը ստացել է վայր ընկնելու, թե՝ անմիջական հարվածի արդյունքում:

Իրականացված համալիր ստուգման շրջանակներում արձանագրվել են նաև ոստիկանության բաժնի և քննչական բաժնի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետների խախտումներ, որոնք հանգեցրել են դատախազական հսկողության արդյունավետության նվազման, իսկ որոշ դեպքերում նույնիսկ դրանց իրականացման փաստացի անհնարինության, մինչդեռ վարչական շրջանի դատախազության կողմից այդ խախտումները բացառելու ուղղությամբ գործուն քայլեր չեն ձեռնարկվել, որ արդյունքում դրանք կրել են շարունակական բնույթ: Այսպես, **մի շարք քրեական գործերով արձանագրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 55-րդ հոդվածի 2-րդ մասի խախտումներ, որոնց համաձայն՝** հետաքննիչը, քննիչը քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկում է դատախազին: Ընդ որում, արձանագրվել են միայն այն դեպքերը, երբ խախտման ժամանակահատվածը կազմում է 5 և ավելի օր: Այսպես.

Թիվ 16962720 քրեական գործը հարուցվել է 09.12.2020թ., բաժնից ելք է եղել 30.12.2020թ., վարչական շրջանի դատախազությունում մուտք է եղել 14.01.2021թ. *(խախտում՝ 35 օր)*:

Թիվ 16962620 քրեական գործը հարուցվել է 09.12.2020թ., ոստիկանության բաժնի պետի կողմից ելքագրվել է 30.12.2020թ., վարչական շրջանի դատախազությունում մուտք է եղել 14.01.2021թ. *(խախտում՝ 35 օր)*:

Թիվ 16967020 քրեական գործը հարուցվել է 23.12.2020թ., ոստիկանության բաժնի պետի կողմից ելքագրվել է 30.12.2020թ., վարչական շրջանի դատախազությունում մուտք է եղել 14.01.2021թ. *(խախտում՝ 21 օր)*:

Թիվ 16873121 քրեական գործը հարուցվել է 22.06.2021թ., ելք է եղել 30.06.2021թ., սակայն դատախազությունում մուտք է եղել 12.07.2021թ. *(խախտում՝ 18 օր)*:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ քրեական գործ հարուցելու մասին որոշումները ընդհանրապես չեն ուղարկվել դատախազություն, մասնավորապես, թիվ 16958720 քրեական գործ հարուցելու մասին որոշումը:

Արձանագրվել են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 14-րդ կետի խախտումներ, որի համաձայն՝ քննիչները քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելուց հետո, այդ մասին 24 ժամվա ընթացքում պետք է տեղյակ պահեն դատախազին: Այսպես.

Թիվ 16107821 քրեական գործով Ա.Ա.-ին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացվել է 30.06.2021թ., սակայն որոշումը դատախազությունում մուտք է եղել 13.07.2021թ. *(խախտում՝ 12 օր)*:

Թիվ 13104121 քրեական գործով Կ.Ա.-ին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը կայացվել է 01.03.2021թ., սակայն որոշումը դատախազությունում մուտք է եղել 10.03.2021թ. *(խախտում՝ 8 օր)*:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ մեղադրյալ ներգրավելու մասին որոշումները ընդհանրապես չեն ուղարկվել դատախազին: Այսպես.

Թիվ 16899220 քրեական գործով Ս.Խ.-ն որպես մեղադրյալ է ներգրավվել, սակայն այդ մասին որոշումը դատախազություն չի ուղարկվել:

Թիվ 16110120 քրեական գործով Ս.Կ.-ն որպես մեղադրյալ է ներգրավվել, սակայն այդ մասին որոշումը դատախազություն չի ուղարկվել:

Բազմաթիվ քրեական գործերով արձանագրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 23-րդ կետի խախտումներ, որի համաձայն՝ քննիչը քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում պետք է ուղարկի դատախազին: Այսպես.

Թիվ 16857021 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը կայացվել է 25.06.2021թ., սակայն դատախազությունում մուտք է եղել 29.07.20121թ. *(խախտում՝ 31 օր)*:

Թիվ 16193821 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը կայացվել է 14.06.2021թ., դատախազությունում մուտք է եղել 13.07.2021թ. */խախտում 28 օր/*:

Թիվ 16884321 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը կայացվել է 17.09.2021թ., որոշման պատճենը ուղարկվել է վարչական շրջանի դատախազություն 11.10.2021թ. *(խախտում՝ 21 օր)*:

Արձանագրվել են ՀՀ քր. դատ. օր. 55-րդ հոդվածի 4-րդ մասի 28-րդ կետի խախտումներ, որի համաձայն՝ քննիչը քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում պետք է ուղարկի դատախազին: Այսպես.

Թիվ 16150921 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը կայացվել է 31.03.2021թ., դատախազությունում մուտք է եղել 13.04.20121թ. *(խախտում՝ 12 օր)*:

Թիվ 16962720 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը կայացվել է 31.03.2021թ., սակայն այն դատախազությունում մուտք է եղել 13.04.2021թ. *(խախտում՝ 12 օր)*:

Այսպիսով, Կոլեգիան արձանագրում է, որ պարբերաբար խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 14-րդ, 18-րդ և 23-րդ կետերի պահանջները, այն է՝ քննիչները որպես կանոն անձին որպես մեղադրյալ ներգրավելու, քրեական գործի վարույթը կասեցնելու և կարճելու մասին մասին որոշման

պատճենը 24 ժամվա ընթացքում չեն ուղարկում դատախազին: Ընդ որում, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիմնականում ուշացումով են ուղարկվում ամսվա վերջին օրերին կասեցված քրեական գործերով կայացված որոշումները: **Մասնավորապես,** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 23-րդ կետի խախտումների մեծամասնությունը վերաբերվում է կիսամյակի վերջին օրը՝ 30.06.2021թ. կասեցած քրեական գործերին և հատկանշական է, որ նույն օրը կասեցված քրեական գործերը կայացված որոշման օրինականությունը ստուգելու նպատակով վարչական շրջանի դատախազությունում մուտք են եղել տարբեր օրերի:

Պարբերաբար խախտվել է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ կետը, որի համաձայն՝ քննիչը նախաքննություն սկսելու մասին անհապաղ պետք է հայտնի դատախազին: Այսպես.

Թիվ 16854221 քրեական գործը քննիչը վարույթ է ընդունել 13.05.2021թ., վարույթ ընդունելու մասին որոշումը վարչական շրջանների դատախազություն է ուղարկվել 10.06.2021թ.՝ քրեական գործը վարույթ ընդունելու 27-րդ օրը:

Թիվ 16874721 քրեական գործը քննիչը վարույթ է ընդունել 01.07.2021թ., վարույթ ընդունելու մասին որոշումը վարչական շրջանների դատախազություն է ուղարկվել 27.07.2021թ.՝ քրեական գործը վարույթ ընդունելու 26-րդ օրը:

Թիվ 16189821 քրեական գործը քննիչը վարույթ է ընդունել 07.04.2021թ., վարույթ ընդունելու մասին որոշումը վարչական շրջանների դատախազությունում մուտք է եղել 26.04.2021թ.՝ քրեական գործը վարույթ ընդունելու 19-րդ օրը:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշումները քննիչը չի ուղարկել դատախազություն: Այսպես, թիվ 16150421 16183121 16179321 16156521 16878220 16958720 16868020 քրեական գործերով հսկողական վարութներում առկա չէ քննիչի կողմից քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշումը:

Մի շարք դեպքերով արձանագրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի խախտումներ, որի համաձայն՝ նախաքննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված միջնորդությունը քննիչը պարտավոր է ներկայացնել դատախազին քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն 4 օր առաջ: Այսպես, թիվ 16962020 քրեական գործով նախաքննության ժամկետը լրացել է 07.02.2021թ., սակայն ժամկետը երկարացնելու միջնորդությունը դատախազությունում մուտք է եղել 15.02.2021թ., միջնորդությունը թվագրված է 11.02.2021թ.: 06.02.2021թ. որոշում է կայացվել նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը քննության առնելու մասին և ժամկետը երկարացվել է մինչև 07.03.2021թ.:

Թիվ 16870820 քրեական գործի նախաքննության ժամկետը լրացել է 23.09.2020թ., նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը դատախազությունում ստացվել է նույն օրը:

Թիվ 16151521 քրեական գործի նախաքննության ժամկետը լրացել է 05.04.2021թ., միջնորդությունը դատախազությունում մուտք է եղել նույն օրը:

Արձանագրվել են նաև քրեական գործով վարույթը կասեցնելուց հետո առանց որևէ հիմնավորման վարույթը վերսկսելու դեպքեր: Այսպես, 29.12.2020թ. որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցված թիվ 16951420 քրեական գործով վարույթը կասեցնելու մասին: Ընդ որում, որոշման մեջ քննիչը նշել է, որ քրեական գործի նախաքննության ընթացքում կատարվել են անհրաժեշտ բոլոր քննչական և դատավարական գործողությունները: 30.12.2020թ. քրեական գործը՝ վարույթը կասեցնելու մասին որոշման օրինականությունը ստուգելու նպատակով ստացվել է վարչական շրջանի դատախազությունում: ՀՀ գլխավոր դատախազի հրամանով նախատեսված 10-օրյա

ժամկետում քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման օրինականությունը վարչական շրջանի դատախազությունում չի ստուգվել և քրեական գործը Երևան քաղաքի դատախազություն չի ուղարկվել:

14.01. 2021թ. ՀՀ ՔԿ Մալաթիա-Սեբաստի վարչական շրջանի քննչական բաժնի պետից ստացվել է գրություն, որով վերջինս, առանց որևէ հիմնավորում ներկայացնելու, խնդրել է անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ կատարելու համար վերադարձնել թիվ 16951420 քրեական գործը:

19.01.2021թ. դատախազը վերադարձրել է քրեական գործը:

25.01.2021թ., առանց որևէ հիմնավորում նշելու, քրեական գործի վարույթը վերսկսվել է: Պարզ չէ, թե ինչ անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ պետք է կատարվեին քրեական գործով, որոնք չէին կարող կատարվել մինչև քրեական գործի կասեցումը:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի կողմից որոշումները դատախազություն և քննչական բաժին ուղարկելու գրությունները թվագրվել են **ավելի վաղ ամսաթվերով, քան այդ որոշումները կայացվել են: Այսպես.**

Թիվ 16967320 քրեական գործը քննիչին հանձնելու մասին որոշումը կայացվել է 04.01.2021թ., ոստիկանության բաժնի պետի կողմից այն քննչական ուղարկելու գրությունը ելքագրված է 30.12.2020թ., քննիչի կողմից վարույթ է ընդունվել 13.01.2021թ.:

Թիվ 16968020 քրեական գործը քննիչին հանձնելու մասին որոշումը կայացվել է 07.01.2021թ., ոստիկանության բաժնի պետի կողմից այն քննչական ուղարկելու գրությունը ելքագրված է 30.12.2020թ., քննիչի կողմից վարույթ է ընդունվել 15.01.2021թ.:

Թիվ 16967620 քրեական գործը քննիչին հանձնելու մասին որոշումը կայացվել է 05.01.2021թ., ոստիկանության բաժնի պետի կողմից այն քննչական ուղարկելու գրությունը ելքագրված է 30.12.2020թ., քննիչի կողմից վարույթ է ընդունվել 12.01.2021թ.:

Իրականացված ստուգման արդյունքներով արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ հարուցված քրեական գործն ուղարկվել է քննչական մարմին, սակայն քննիչի կողմից վարույթ է ընդունվել չարդարացված ձգձգումներով, այսինքն փաստացի որոշակի ժամանակահատված կոնկրետ քրեական գործով չի եղել վարույթն իրականացնող մարմին: Մասնավորապես,

Թիվ 16959420 քրեական գործը քննիչին հանձնելու մասին որոշումը կայացվել է 09.12.2020թ., ոստիկանության բաժնի պետի կողմից այն քննչական բաժին ուղարկելու մասին գրությունը ելքագրված է 21.12.2020թ., քննիչի կողմից քրեական գործը վարույթ է ընդունվել 14.01.2021թ. /36 օր քննություն չի կատարվել/:

Թիվ 16963720 քրեական գործը քննիչին հանձնելու մասին որոշումը կայացվել է 17.12.2020թ., ոստիկանության բաժնի պետի կողմից այն քննչական բաժին ուղարկելու մասին գրությունը ելքագրվել է 21.12.2020թ., քննիչի կողմից վարույթ է ընդունվել 15.01.2021թ. /29 օր քննություն չի կատարվել/:

Թիվ 16965520 քրեական գործը հարուցելու և քննիչին հանձնելու մասին որոշումը կայացվել է 17.12.2020թ., սակայն քննիչի կողմից վարույթ է ընդունվել 15.01.2021թ. /29 օր քննություն չի կատարվել/:

Թիվ 16964820 քրեական գործը քննիչին հանձնելու մասին որոշումը կայացվել է 15.12.2020թ., ոստիկանության բաժնի պետի կողմից այն քննչական բաժին ուղարկելու մասին գրությունը ելքագրվել է 22.12.2020թ., քննիչի կողմից վարույթ է ընդունվել 12.01.2021թ. /28 օր քննություն չի կատարվել/:

Արձանագրվել են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 282-րդ հոդվածի 3-րդ մասի խախտումներ, որի համաձայն քննիչը քննչական գործողություններ

կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին միջնորդություն հարուցելու որոշման պատճենն ուղարկում է հսկող դատախազին: Այսպես.

Թիվ 16107420 քրեական գործով մեղադրյալ Հ.Ե.-ի բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ քննիչի միջնորդությունը հսկող դատախազին չի ուղարկվել:

Թիվ 16872319 քրեական գործով Գ.Վ.-ի տանը խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին քննիչի դատարան ներկայացված միջնորդության պատճենը հսկող դատախազին չի ուղարկվել:

Արձանագրվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի խախտում, որի համաձայն՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ կասկածյալի կամ մեղադրյալի մոտ առկա է հոգեկան **հիվանդություն** կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարում:

Կոլեգիան արձանագրում է նաև, որ իրականացված համալիր ստուգման շրջանակներում արձանագրվել են ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների, ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների հանձնարարականների հետևյալ՝ համակարգային բնույթ ունեցող խախտումները.

Արձանագրվել են ՀՀ դատախազության կոլեգիայի 23.11.2015թ. նիստի 2-րդ հարցի որոշման 1-ին կետի 10-րդ ենթակետի խախտումներ, որի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի կարգով կայացված յուրաքանչյուր որոշման հիման վրա իրականացվող նախաքննության կատարման հետագա ընթացքի նկատմամբ դատավարական ղեկավարումը և դատախազական հսկողությունն անձամբ իրականացնում է համապատասխան մարզի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանի կամ կայազորի զինվորական դատախազը, որը, մինչև նոր որոշում կայացնելը, ՀՀ գլխավոր դատախազի որոշման կատարման ընթացքը պարտադիր ներկայացնում է ՀՀ գլխավոր դատախազին կամ ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին: **Մի շարք քրեական գործերով** ՀՀ գլխավոր դատախազի կողմից քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացվել է, որից հետո քրեական գործի նկատմամբ դատավարական ղեկավարում վարչական շրջանի դատախազը չի իրականացրել:

Նմանատիպ մեկ գործով է ընդամենը վարչական շրջանի դատախազը դատավարական ղեկավարում իրականացրել, որով սակայն նույնպես թույլ է տրվել խախտում: Այսպես, ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս պարզել են, որ «Երևանի Վ.Թեքեյանի անվան թիվ 92 դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ծ.Մարդանյանը, ՊՈԱԿ-ում որպես բանվոր է աշխատանքի ընդունել ամուսնուն՝ Ն.Շահինյանին, որպես լաբորանտ՝ մորը՝ Վ.Հարությունյանին, ինչպես նաև դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Գ.Մուրադյանին համատեղության կարգով հրամանագրել է որպես դպրոցի պահակ, որոնք աշխատանքի չեն հաճախել, իսկ նրանց աշխատավարձը յուրացման եղանակով հափշտակվել է:

Դեպքի առթիվ 20.05.2020թ. վարչական շրջանի դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

30.10.2020թ. որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կարճելու մասին, որը ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարի կողմից 13.01.2021թ. վերացվել է:

09.08.2021թ. կրկին որոշում է կայացվում քրեական գործի վարույթը կարճելու մասին:

17.08.2021թ. քրեական գործը կարճման որոշման օրինականությունը վերստուգելու նպատակով՝ դատախազ Դ.Ներսիսյանի եզրակացությամբ այն մասին, որ որոշումն օրինական է և հիմնավոր, ուղարկվում է Երևան քաղաքի դատախազություն:

Դրանից շուրջ 3 ամիս հետո՝ 08.11.2021թ. վարչական շրջանի դատախազը գրություն է հասցեագրել Երևան քաղաքի դատախազին և խնդրել վերադարձնել քրեական գործը՝ գրության մեջ նշելով, որ 17.08.2021թ. տեխնիկական վրիպակի հետևանքով թիվ 16201420 քրեական գործը վարչական շրջանի մեկ այլ դատախազի եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի դատախազություն, այնինչ, դեռևս 17.08.2021թ. /որոշումն իրականում թվագրված է 18.08.2021թ./ քրեական գործի նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազ Դ.Վեքիլյանի կողմից կայացվել է որոշում քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու մասին:

11.11.2021թ. քրեական գործը Երևան քաղաքի դատախազությունից վերադարձվել է վարչական շրջանի դատախազություն, իսկ 12.11.2021թ.՝ ուղարկվել քննչական բաժին: Ընդ որում, քրեական գործը վերադարձնելու ուղեկցական գրության մեջ վարչական շրջանի դատախազը նշել է, որ վերադարձնում է վարույթը կարճված թիվ 16201420 քրեական գործը:

Այսպիսով, դեռևս 18.08.2021թ. վերացնելով քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը՝ վարչական շրջանի դատախազը շուրջ 3 ամիս միջոցներ չի ձեռնարկել քրեական գործը՝ նախաքննությունը շարունակելու նպատակով քննչական բաժին ուղարկելու ուղղությամբ, որի արդյունքում քրեական գործով 3 ամիս նախաքննություն չի իրականացվել, այն դեպքում, երբ այդ ընթացքում վարչական շրջանի դատախազը նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն է քննության առել:

Արձանագրվել են ՀՀ դատախազության կոլեգիայի 2017թ. հոկտեմբերի 27-ի նիստի 2-րդ հարցի որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի խախտումներ, որի համաձայն՝ պետք է ապահովվի, որպեսզի բնակարանային գողությունների դեպքերով դեպքի վայրի զննության արձանագրությունն անհապաղ ուղարկվի դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին, իսկ վերջինս անմիջապես ուսումնասիրի այն և, եթե պարզի, որ զննությունը թերի կամ մակերեսային է կատարվել հանձնարարի կատարել դեպքի վայրի լրացուցիչ զննություն:

Մասնավորապես, **թիվ 16100221 քրեական գործի** ուսումնասիրությամբ պարզվել է, որ դեպքի վայր հանդիսացած Երևան քաղաքի Բաբաջանյան 35 շենքի 45 բնակարանում կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում չի զննվել նշված շենքի հարակից տարածքը՝ բնակելի շենքեր կամ հասարակական օբյեկտներ առկա լինելու, դրանցում, ինչպես նաև հենց Բաբաջանյան 35 շենքում տեսանկարահանող սարքեր հայտնաբերելու և քննության համար հետաքրքրություն ներկայացնող տեսանյութերը վերցնելու ուղղությամբ, այլ ընդամենը 9 օր անց այդ ուղղությամբ հանձնարարություն է տրվել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնին:

Թիվ 16100321 քրեական գործով 11.01.2021թ. դեպքի վայրի զննության արձանագրությունը ուղարկվել է դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին, որը քննիչին դեպքի վայրի լրացուցիչ զննություն կատարելու հանձնարարություն չի տվել:

Մինչդեռ, քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դեպքի վայր հանդիսացած Երևան քաղաքի Օհանով 10 շենքի 2 բնակարանում կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում չի զննվել նշված շենքի հարակից տարածքը՝ բնակելի շենքեր կամ հասարակական օբյեկտներ առկա լինելու, դրանցում, ինչպես նաև հենց Օհանով 10 շենքում տեսանկարահանող սարքեր հայտնաբերելու և քննության համար հետաքրքրություն ներկայացնող տեսանյութերը վերցնելու ուղղությամբ, այլ ընդամենը 9 օր անց այդ ուղղությամբ հանձնարարություն է տրվել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնին:

Թիվ 16100521 քրեական գործով դեպքի վայրի զննության արձանագրությունը դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին չի ուղարկվել:

Արդյունքում՝ թիվ 16100521 քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դեպքի վայրի հարևանությամբ գտնվող տների ճակատային հատվածներում առկա են եղել տեսախցիկներ, սակայն վարույթն իրականացնող մարմինն անհապաղ միջոցներ չի ձեռնարկել պարզելու այդ տեսախցիկների կողմից դեպքի վայրը տեսանկարահանած լինելու հանգամանքը և վերցնելու գործի համար կարևոր նշանակություն ունեցող տեսաձայնագրությունները, այլ ընդամենը դեպքից 18 օր հետո հանձնարարություն է տվել հետաքննության մարմնին, որտեղից էլ պատասխան է ստացվել, որ դեպքի վայրի մոտակայքում տեղադրված տեսանկարահանող սարքերի ուսումնասիրությամբ քննությանը հետաքրքրող տեսագրություններ չեն հայտնաբերվել:

Արձանագրվել են ՀՀ դատախազության կոլեգիայի 2017թ. հոկտեմբերի 27-ի նիստի 2-րդ հարցի որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի խախտումներ, որի համաձայն՝ անհրաժեշտ է մինչև յուրաքանչյուր տարվա կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը ուսումնասիրել մարզի և վարչական շրջանի դատախազության տարածքում (Երևան քաղաքի դատախազությունը ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության վարույթում գտնվող գործերով) բնակարանային գողությունների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները, ուսումնասիրության հատուկ առարկա դարձնել դրանց կատարման ժամը, այն, թե տվյալ տարածքի հատկապես որ թաղամասում են առավել շատ բնակարանային գողության դեպքեր արձանագրվում, արդյոք գողություն կատարող անձինք ունեն դատվածություն նախկինում նույնաբնույթ կամ համասեռ հանցանք կատարելու համար:

2020թ. 2-րդ կիսամյակի համար նման ամփոփում չի կատարվել, իսկ 2021թ. առաջին կիսամյակի համար ամփոփումը կատարվել է 2021թ. հոկտեմբեր ամսին՝ թերացումներով:

Արձանագրվել են նաև բնակարանային գողությունների դեպքերով սխալ որակումների դեպքեր: Այսպես.

- **Թիվ 16850421 քրեական գործ**

16.04.2021թ. ժ.22.30-ին Ա.Մուղումյանը ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում է տվել, որ նույն օրը ժ.12.30-ից մինչև ժ. 15.00-ն ընկած ժամանակահատվածում անհայտ անձը Երևան քաղաքի բաբաջանյան 22 շենքի 34 բնակարանի ննջասենյակից գողացել է ոսկյա մատանի: Նման պայմաններում դեպքը գրանցվել է որպես անձնական ունեցվածքի գողություն և նախապատրաստվել են նյութեր:

26.04.2021թ. հետաքննիչի կողմից որոշում է կայացվել Ա.Մուղումյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին: Նման պայմաններում, քրեական գործը՝ առանց քրեական գործը քննիչին հանձնելու մասին որոշում կայացնելու, 27.04.2021թ. ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի ուղեկցական գրությամբ ուղարկվում է քննչական բաժին: Քննիչի կողմից քրեական գործը վարույթ է ընդունվում 06.05.2021թ.:

07.06.2021թ. քրեական գործի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցվել է: Կայացված որոշման օրինականությունը ստուգվել է վարչական շրջանի դատախազությունում:

10.06.2021թ. քրեական գործը ուղարկվել է Երևան քաղաքի դատախազություն՝ վարույթը կասեցնելու մասին որոշման օրինականությունը ստուգելու համար:

16.07.2021թ. քրեական գործը կայացված որոշման օրինականությունը չստուգված վիճակում վերադարձվել է վարչական շրջանի դատախազություն:

Երևան քաղաքի դատախազի տեղակալի ուղեկցական գրության մեջ նշվել է, որ քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ենթադրյալ կատարված արարքը

համապատասխանում է ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասի, այլ նույն օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին:

Բացի այդ դեպքի վայրի զննությամբ չի պարզվել Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցի 22 շենքի շքամուտքերը կոդավորված դռներով կահավորված լինելու, նշված շքամուտքում կամ հարակից տարածքներում տեսանկարահանող սարքեր առկա լինելու հանգամանքը, որոնց բացակայության դեպքում պետք է քննարկվեր համապատասխան իրավաբանական կամ պաշտոնատար անձանց միջնորդագրեր ներկայացնելու հարցը:

Քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից խախտվել է նաև ՀՀ դատախազության կոլեգիայի 12.12.2015թ. նիստի որոշման 5-րդ կետը, այն է՝ քրեական գործով 20.07.2021թ. տրվել է գրավոր ցուցում, որի ամփոփիչ կետում չի հանձնարարվել վարույթն իրականացնող մարմնին, ցուցումի պահանջները կատարելուց հետո անմիջապես հետո, քրեական գործը տրամադրել հսկող դատախազին՝ տրված ցուցումով սահմանված քննչական և այլ դատավարական գործողությունների, կայացված որոշումների օրինականությունը և լրիվությունը ստուգելու համար:

Արդյունքում քննիչը ոչ միայն ցուցումի պահանջները կատարելուց հետո քրեական գործը չի տրամադրել հսկող դատախազին, այլ նույնիսկ քրեական գործի վարույթը վերսկսելու մասին որոշումը դատախազություն չի ուղարկվել:

Քրեական գործի հսկողական վարույթի և քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ չէ նաև, թե վերաորակման վիճակագրական քարտը ուղարկվել է ՀՀ ոստիկանության ԻԿ, թե ոչ:

- **Թիվ 16152121 քրեական գործ**

02.01.2021թ. ժամը 15.30-ին Ա.Զ.-ից ստացվել է ահազանգ, որ 31.12.2020թ. ժամը 22.30-ից մինչև 02.01.2021թ. ժամը 14.00-ն ընկած ժամանակահատվածում, կոտրել են ՀԱԹ Բ-2 թաղ. 1/1 հսցեում գործող, նախկինում գրասենյակ հանդիսացող շինության պատշգամբի եվրոարտադրության դռան փականը և գողացել մոտ 300.000 ՀՀ դրամ գումար և 4 կտոր ոսկյա զարդեր: Նշված դեպքը գրանցվել է որպես անձնական ունեցվածքի գողություն և դրանով 6 օր նյութեր են նախապատրաստվել:

Մինչդեռ 08.01.2021թ. քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ նշվել է, որ դեռևս 2021թ. հունվարի 2-ին, ժամը 15.30-ին ոստիկանության Մալաթիայի բաժին է զանգահարել Ա.Զ.-ն և հայտնել, որ 2020թ. դեկտեմբերի 31-ի ժամը 22.30-ից մինչև 2021թ. հունվարի 2-ի ժամը 14.00-ն ընկած ժամանակահատվածում, Երևան քաղաքի ՀԱԹ Բ-2 թաղամասի 130շ. 1/1 հասցեի պատշգամբի եվրոարտադրության դռան փականը վնասելու եղանակով ապօրինի մուտք են գործել բնակարան և խոհանոցից գողացել 300.000 ՀՀ դրամ գումար, իսկ ննջասենյակի պահարանից՝ թվով 4 կտոր 300.000 ՀՀ դրամ արժողությամբ ոսկյա զարդեր՝ պատճառելով ընդհանուր առմամբ 600.000 ՀՀ դրամի վնաս: Ժամը 16.00-ին Ա.Զ.-ից վերցվել է հաղորդում:

Նման պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով քրեական գործ հարուցելու և քննիչին հանձնելու մասին որոշումը կայացվել է 08.01.2021թ.՝ հաղորդում ներկայացնելուց 6 օր հետո, ոստիկանության բաժնից քրեական գործը ելքագրվել է 22.01.2021թ.՝ քննիչին հանձնելու մասին որոշում կայացնելուց 14 օր հետո, իսկ քննիչի կողմից վարույթ է ընդունվել 25.01.2021թ.՝ քննիչին հանձնելու մասին որոշում կայացնելուց 17 օր հետո:

Արձանագրվել են նաև ՀՀ դատախազության կոլեգիայի 2018թ. փետրվարի 9-ի նիստի որոշման 9-րդ կետի խախտումներ, որի համաձայն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումները պետք է ենթարկվեն հատուկ հսկողական ուսումնասիրության՝ նկատի ունենալով դրանց դատավարական նշանակությունը և դրանցով սկսվող քրեական հետապնդման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության բացառիկությունը: Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման ուսումնասիրությամբ պետք է ապահովել մեղադրանքի փաստական կողմից ստույգ, պարզ և հստակ ձևակերպումը, դրանում շարադրելով տվյալ հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները և տվյալ դեպքում այդ հատկանիշների կոնկրետ դրսևորումները /ժամանակ, եղանակ, հետևանք և այլն/: Այսպես.

Թիվ 16102421 քրեական գործով 31.03.2021թ. որոշում է կայացվել Գ.Ուստիյանին ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որում սխալմամբ նշվել է, որ Գ.Ուստիյանը 12.11.2020թ. Արշակունյանց պողոտայում վարել է տրանսպորտային միջոց և թույլ տվել ՃԵԿ կանոնների խախտում, մինչդեռ պետք է նշվեր, որ վերջինս 13.01.2021թ. Սեբաստիա փողոցում վարել է տրանսպորտային միջոց և թույլ տվել ՃԵԿ կանոնների խախտում: Նման պայմաններում դատախազը ստացել է այս որոշումը, սակայն ոչինչ չի ձեռնարկել: Արդյունքում մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը նույն թերությամբ 13.04.2021թ. նորից ուղարկվել է դատախազություն՝ արդեն մեղադրյալի կողմից ստորագրված:

Մեկ այլ դեպքում, **թիվ 16107420 քրեական գործով** Հ.Ե.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասով, մինչդեռ քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալները վկայում են վերջինիս արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված առերևույթ հանցագործության հատկանիշների առկայության մասին:

Մի շարք դեպքերում արձանագրվել են ՀՀ գլխավոր դատախազի 06.10.2017թ. թիվ 90-րդ հրամանի 1-ին կետի խախտումներ, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում քննվող քրեական գործերով նախաքննության ցանկացած փուլում քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու (նաև առաջադրված մեղադրանքի մի մասով քրեական հետապնդումը դադարեցնելու) վերաբերյալ որոշումներ կայացվելու դեպքում դրանց օրինակները 3-օրյա ժամկետում պետք է ուղարկվեն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության համապատասխան վարչություն: Այսպես.

Թիվ 16870520 քրեական գործով Ա.Ս.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական հետապնդումը դադարեցնելու և 296-րդ հոդվածի 3-րդ մասով քրեական հետապնդում չիրականացնելու մասին 19.03.2021թ. որոշման օրինակը ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչություն չի ուղարկվել:

Թիվ 16161821 քրեական գործով Գ.Դ.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չիրականացնելու մասին 25.03.2021թ. որոշման օրինակը ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչություն չի ուղարկվել:

Մի շարք քրեական գործերով խախտվել է ՀՀ գլխավոր դատախազի 29.06.2017թ. թիվ 52 հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջը, որի համաձայն քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումների օրինականությունը պետք է ստուգվի 10-օրյա ժամկետում, իսկ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումների օրինականությունը 7-օրյա ժամկետում: Այսպես.

Թիվ 16171721 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը վարչական շրջանի դատախազություն է մուտք եղել 06.07.2021թ., ելք է եղել 20.10.2021թ. /խախտում՝ 96 օր/:

Թիվ 16855021 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը վարչական շրջանի դատախազություն է մուտք եղել 07.07.2021թ., ելք է եղել 22.10.2021թ. /խախտում՝ 95 օր/:

Թիվ 16163521 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վարչական շրջանի դատախազություն է մուտք եղել 01.06.2021թ., ելք է եղել 27.08.2021թ. /խախտում՝ 80 օր/:

Թիվ 16196221 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը վարչական շրջանի դատախազություն է մուտք եղել 22.06.2021թ., ելք է եղել 03.09.2021թ. /խախտում՝ 63 օր/:

Թիվ 16164821 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վարչական շրջանի դատախազություն է մուտք եղել 23.06.2021թ., ելք է եղել 27.08.2021թ. /խախտում՝ 58 օր/:

Արձանագրվել են ՀՀ գլխավոր դատախազի 11.04.2018թ. թիվ 32 հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետի խախտումներ, որի համաձայն՝ յուրաքանչյուր շաբաթվա առաջին աշխատանքային օրը ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչություն պետք է ուղարկվի տեղեկանք՝ նախորդ շաբաթվա ընթացքում ընդհանուր իրավասության առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում քննված և դատական ակտի կայացմամբ ավարտված քրեական գործերի վերաբերյալ: Արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ դատական ակտերի վերաբերյալ տեղեկատվությունն **ընդհանրապես չի ուղարկվել** ՀՀ գլխավոր դատախազություն: **Արձանագրվել են նաև** դատական ակտերի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ գլխավոր դատախազություն ուշացումով ուղարկելու դեպքեր:

Թիվ 16107420 քրեական գործով խախտվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 03.10.2016թ. թիվ 20/2(3)-53-16 հանձնարարականի 2-րդ կետը, այն է՝ չեն հետևել, որ վարույթը կարճված թիվ 16107420 քրեական գործով մեղադրյալ Հ.Ե.-ի նկատմամբ «ստորագրություն չհեռանալու մասին» տեսակի խափանման միջոցը վերացվելուց հետո, վարույթ իրականացնող մարմինը այդ մասին, անհապաղ, ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման միջոցով, գրավոր տեղեկացնի ՀՀ ՍԷԿՏ համակարգին՝ վերջինիս ազատ տեղաշարժվելու արգելքը վերացնելու համար:

Բացի այդ, խախտվել է նաև նույն հանձնարարականի 5-րդ կետը, այն է՝ վերը նշված խախտման մասին չի զեկուցվել ՀՀ գլխավոր դատախազի ոլորտը համակարգող տեղակալին, ինչպես նաև անմիջապես չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ՝ դրա պահանջները կատարելու ուղղությամբ /որոշումը կայացվել է 18.01.2021թ., սակայն այդ մասին հանձնարարությունը տրվել է 15.04.201թ., այն էլ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի ցուցումից հետո/:

Խախտվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 13.04.2021թ. հանձնարարականի պահանջը՝ թիվ 13892018/1 քրեական գործը ստուգման նպատակով Երևան քաղաքի դատախազություն ուղարկելու մասին ուղեկցական գրությանը չի կցվել գործով անցնող անձանց, նրանց կողմից օգտագործվող հեռախոսահամարների և այլ տվյալների վերաբերյալ տեղեկանքը ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների վարչություն փոխանցված լինելու մասին ուղեկցական գրության պատճենը:

Մի շարք քրեական գործով արձանագրվել են ՀՀ գլխավոր դատախազի 26.10.2016թ. հանձնարարականի 1-ին կետի խախտումներ, որի համաձայն՝ քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական

գործով վարույթը կասեցնելու մասին կայացված որոշումների դեմ դատավարության մասնակիցների բողոքները դատարանների կողմից բավարարվելու դեպքում, կայացված որոշման մասին անհապաղ, ըստ համապատասխան իրավասության սահմանների, անհրաժեշտ է հայտնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության համապատասխան վարչություն:

Մի շարք քրեական գործերով արձանագրվել են ՀՀ գլխավոր դատախազի 20.06.2008թ. թիվ 59 հրամանով հաստատված ՀՀ դատախազության կանոնակարգի 403-րդ կետի խախտումներ, մասնավորապես հսկողական վարույթները կազմված են եղել թերի, հիշյալ կետով նախատեսված՝ հսկողական վարույթին պարտադիր կցվող մի շարք փաստաթղթեր բացակայել են հսկողական վարույթից: Մասնավորապես, 05.08.2021թ. հարուցված թիվ 16873420 քրեական գործի հսկողական վարույթը սկսվում է նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդությամբ դատախազություն ուղարկելու քննչական բաժնի պետի 26.02.2021թ. գրությունից, որը դատախազությունում մուտք է եղել 02.03.2021թ.:

13.07.2020թ. հարուցված թիվ 10855420 քրեական գործի հսկողական վարույթը սկսվում է կարճման որոշման օրինականությունը ստուգելու համար քրեական գործը դատախազություն ուղարկելու քննչական բաժնի պետի 15.02.2021թ. գրությամբ:

07.08.2020թ. հարուցված թիվ 16201920 քրեական գործի հսկողական վարույթը սկսվում է կարճման որոշման օրինականությունը ստուգելու մասին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի 29.06.2021թ. գրությամբ:

01.09.2020թ. հարուցված թիվ 16882520 քրեական գործի հսկողական վարույթը սկսվում է կասեցման որոշման օրինականությունը ստուգելու համար քրեական գործը դատախազություն ուղարկելու քննչական բաժնի պետի 31.03.2021թ. գրությամբ:

Ստուգումների արդյունքում պարզվել է նաև, որ քրեական գործերով կայացված որոշումների /օր. վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների և այլն/ դեմ բողոքները, քրեական գործով միջնորդությունները հաշվառվել են որպես դիմումներ և դրանցով կազմվել են դիմումների վարույթներ, մինչդեռ դրանք պետք է կցվեին քրեական գործի հսկողական վարույթին: Ըստ այդմ, **խախտվել է ՀՀ գլխավոր դատախազի 20.06.2008թ. N 52 հրամանով հաստատված ՀՀ դատախազության կանոնադրության 399-րդ կետը,** որի համաձայն՝ յուրաքանչյուր դատախազությունում նույն գործով կամ նույն հարցով կազմվում է մեկ վերահսկողական վարույթ: Բացի այդ, նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների դեմ բողոքները հաշվառվել են որպես դիմումներ և դրանցով կազմվել են դիմումների վարույթներ, մինչդեռ դրանք պետք է կցվեին նյութերի վարույթին:

Կոլեգիան արձանագրում է նաև, որ իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել են **դիմումներին ընթացք չտալու դեպքեր:**

21.01.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է վարչական շրջանի դատախազության դատախազ Վ.Պետրոսյանին հասցեագրված Արմինե Հովհաննիսյանի դիմումը, որը ըստ էության թիվ 16898920 քրեական գործով վարույթը կասեցնելու և քրեական հետապնդում չիրականացնելու որոշումների դեմ բողոք է: Դիմում-բողոքում Ա.Հովհաննիսյանը նշել է, որ գիտի հանցագործության կազմակերպչին, որի միջոցով էլ հնարավոր է գտնել կատարողին: Այդ մասին հայտնել է քննիչին, բայց ուշադրության չի արժանացել: Նման պայմաններում նշված դիմում-բողոքին ընթացք չի տրվել:

29.01.2021թ., 25.06.2021թ. և 05.10.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել են թիվ 16154721 քրեական գործով հաղորդում ներկայացրած անձ՝

Վ.Հովհաննիսյանի ներկայացուցիչ Ա.Թորոսյանի կողմից վարչական շրջանի դատախազին հասցեագրված դիմումները, որոնց պատասխաններ չեն տրվել:

09.10.2020թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Սամվել Կյուրեղյանի կողմից վարչական շրջանի դատախազին հասցեագրված դիմումը, որին պատասխան չի տրվել:

01.02.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Սամվել Կյուրեղյանի կողմից վարչական շրջանի դատախազին հասցեագրված կրկնակի դիմումը՝ իր նախկին դիմումին չպատասխանելու վերաբերյալ վերաբերյալ, որին կրկին պատասխան չի տրվել:

25.03.2021թ. վարչական շրջանների դատախազությունում ստացվել է Շ.Խաչատրյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումը, որին պատասխան չի տրվել:

10.03.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Ջ.Ամարիկյանի կողմից վարչական շրջանի դատախազին հասցեագրված դիմումը, որն առանց որևէ հիմնավորման, վարչական շրջանի դատախազության դատախազի մակագրությամբ կցվել է շարք, իսկ Ջ.Ամարիկյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված և վարչական շրջանի դատախազությունում 29.07.2021թ. ստացված դիմումին պատասխան չի տրվել:

20.08.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է փաստաբան Շ.Շահինյանի դիմումը, որին ընթացք չի տրվել:

05.08.2021թ. Երևան քաղաքի դատախազությունից վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Խ.Ավագյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումը՝ պաշտոնական փաստաթուղթ կեղծելու վերաբերյալ, որին ընթացք չի տրվել:

Բազմաթիվ դեպքերով չի պահպանվել այլ մարմինների կամ այլ դատախազության լուծման ենթակա դիմումը, գրանցման պահից եռօրյա ժամկետում ըստ պատկանելության ուղարկելու պահանջը՝ խախտելով ՀՀ դատախազության կանոնակարգի 114-րդ կետը: Մասնավորապես.

19.03.2021թ. ՀՀ գլխավոր դատախազությունից վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Խ.Դավթյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումը՝ Վ.Նավոյանի կողմից վաշխառություն կատարելու մասին, որը քննարկման նպատակով ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին է ուղարկվել 18.05.2021թ.:

26.02.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղված հանցագործությունների գործերով վարչությունից ստացվել է Շ.Պետրոսյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումը: Դիմումը քննարկման նպատակով ՀՀ ոստկանության Մալաթիայի բաժին է ուղարկվել 11.03.2021թ., ընդ որում, ուղեկցական գրությունը հասցեագրվել է ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետ Ի.Մեսրոպյանին, որը այդ ժամանակ այդ պաշտոնում չի աշխատել:

09.08.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Հարություն Շարյանի դիմումը՝ Ն.Եղոյանի կողմից խարդախություն կատարելու վերաբերյալ, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու հանձնարարությամբ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին է ուղարկվել 03.09.2021թ.՝ 24 օր անց:

Թիվ 16102920 քրեական գործով վկա Ս.Սեյրանյանը 12.05.2021թ. դիմում է հասցեագրել քրեական գործով քննիչ Ս.Միքայելյանին, որում հայտնում է, որ 26.04.2021թ, իրեն է զանգահարել Մալաթիայի ոստիկաններից Մելոն և կանչել բաժին զրուցելու: Գնացել է

ոստիկանություն, որտեղ Մելոն խնդրել է իրեն օգնել մի հարցում և հարցրել է, թե արդյոք ճանաչում է Արարատյան 2-րդ զանգվածի բնակիչ Սևակին: Ինքն ասել է, որ Արարատյան 2-րդ զանգվածից ոչ ոքի, այդ թվում Սևակին չի ճանաչում, որովհետև աշխատում է Արարատյան 1-ին զանգվածում: Մելոն իրեն վստահեցրել է, որ իրենց գործերը լրացնելու համար պետք է օգնի և ճանաչի իրենց կողմից տեսանյութում մատնանշված անձին ու ասի, որ դա Սևակն է: Ինքը նորից պնդել է, որ Սևակին չի ճանաչում, սակայն Մելոն ասել է, որ դա իրեն է պետք, վախենալու բան չկա, դա ուղղակի արխիվի համար է արվում: Ինքը հավատացել է և որոշել է օգնել Մելոյին: Մելոն ցույց է տվել Սևակին և ասել է, որ քննիչի մոտ ասեի, թե իբր ճանաչում է: Դրանից հետո Մելոն իրեն ուղեկցել է քննիչի մոտ, որտեղ ասել է, թե իբր ճանաչում է Սևակին և տեսագրության մեջ եղած տղամարդը Սևակն է: Դրանից հետո պատահական լսել է, որ ոստիկանները 2-րդ զանգվածից բնակարանային գողություն կատարելու համար բռնել են Սևակ անունով տղայի ու դատում են: Անմիջապես հիշել է, որ Մելոն իրեն հենց նույն Սևակի մասին է ասել, որ իբր չեն կարողանում բռնեն ու համոզվել է, որ Մելոն իրեն խաբել է և շատ հնարավոր է իր գրածի հիման վրա են այդ տղային բռնել: Հայտնում է, որ սուտ ցուցմունք է տվել և խնդրում է իր ցուցմունքը չեղյալ համարել: Այդպես է գրել, քանի որ Մելոն իրեն խաբել է: Պատրաստ է դա հաստատել ինչպես Մելոյի ներկայությամբ, այնպես էլ դատարանում:

Նշված դիմումը վարչական շրջանի դատախազի կողմից վերադարձվել է քննչական բաժին՝ քրեական գործի շրջանակներում քննարկելու և իրավական գնահատական տալու համար:

06.05.2021թ. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում ստացվել վարչական շրջանի դատախազին հասցեագրած ՀՀ ՔԿ Երևան քաղաքի վարչության Մալաթիա-Սեբաստիայի բաժնի ավագ քննիչ Ս.Միքայելյանի վարույթում քննվող թիվ 16102621 քրեական գործով վկա Բեռտա Տիգրանի Բարուշյանի դիմումը՝ հիշյալ քրեական գործով իրեն լրացուցիչ հարցաքննելու վերաբերյալ:

Դիմումում Բ.Բարուշյանը նշել է, որ 05.05.2021թ. բերման է ենթարկվել ՀՀ ՔԿ Երևան քաղաքի վարչության Մալաթիա-Սեբաստիայի քննչական բաժին, որտեղ իր կամքին հակառակ, առանց իր ամուսնու վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքի պարզաբանման, հոգեբանական ճնշման և ոստիկանության բաժնում երկար ժամանակ պահելու սպառնալիքի տակ, բավարար չափով հայերեն լեզվին չտիրապետելու և փաստաբանի մասնակցությունը թույլ չտալու պայմաններում տվել է ամուսնու և նրա բարեկամի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող ցուցմունք:

Բ.Բարուշյանի դիմումին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազ Վ.Վարազյանի կողմից 18.05.2021թ. տվել է պարզաբանում:

Մի շարք դեպքերում չի պահպանվել դիմումներն ու գրագրությունը դատախազությունում գրանցվելուց հետո՝ ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում ուսումնասիրելու և լուծելու պահանջը խախտելով ՀՀ դատախազության կանոնակարգի 143-րդ կետը: Մասնավորապես.

12.05.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվում է Ն.Իսրայելյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված հանցագործության մասին հայտարարություն վերտառությամբ դիմումը, որի վերաբերյալ Ն.Իսրայելյանին պարզաբանում է տրվում միայն 5 ու կես ամիս հետո՝ **30.10.2021թ.**:

31.05.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է թիվ 16961220 գործով տուժող Երվանդ Քեշիշյանի ներկայացուցիչ Պավել Գյուլումյանի բողոքը՝ քննիչի անգործության վերաբերյալ: **30.10.2021թ.**՝ բողոքը ստանալուց 5 ամիս հետո միայն, նշված բողոքի վերաբերյալ տրվել է պարզաբանում:

16.03.2021թ. ՀՀ գլխավոր դատախազությունից վարչական շրջանի դատախազությունում ստացվել է «Մեթալ Օքսայդս» ՍՊԸ ներկայացուցիչ Տ.Մուրադյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումը, որի պատասխանը դիմումատուին տրվել է **18.06.2021թ.**:

19.08.2021թ. ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունից վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Լուսյա Ծատուրյանի դիմումը՝ վերջինիս կողմից իրեն գույքային վնաս պատճառելու և ոստիկանության աշխատակիցների կողմից այդ վնասը վերականգնելու համար միջոցներ ձեռնարկված չլինելու մասին ՀՀ գլխավոր դատախազության կողմից անպատասխան թողնելու վերաբերյալ: Դիմումի պատասխանը տրվել է **19.10.2021թ.**:

30.07.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Հ.Արզումանյանի կողմից ՀՀ Վարչապետին հասցեագրված դիմումը, որի վերաբերյալ պարզաբանում տրվել է **26.10.2021թ.**: Ընդ որում, պատասխանի մեջ նշված է, որ դիմումը հասցեագրված է եղել ՀՀ գլխավոր դատախազին, իսկ դիմումատուի հասցեն սխալ է նշված:

05.06.2020թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Լ.Ոսկանյանի դիմումը՝ քրեական գործով ճիշտ քննություն վարելու մասին, որի վերաբերյալ պարզաբանում ներկայացվել է **09.07.2020թ.**: Ընդ որում դիմումի նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ այն ըստ էության կարող է լինել նաև քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման դեմ բողոք /քրեական գործը կարճվել է 15.05.2020թ./ և այդ դեպքում ենթակա լիներ քննարկման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածով սահմանված կարգով:

Արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ դիմումները ՀՀ գլխավոր դատախազությունից, Երևան քաղաքի դատախազությունից հսկողությամբ ուղարկվել են վարչական շրջանի դատախազություն, սակայն պատասխան չի ստացվել կամ այն ուշ է ստացվել: Այսպես.

31.03.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչությունից քննարկման համար ստացվել է թիվ 58220219 գործով մեղադրյալի պաշտպան Լ.Սահակյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումը: Վարչության պետի ուղեկցական գրությամբ խնդրվել է դիմումի քննարկման արդյունքների մասին հայտնել ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն: 21.04.2021թ. դիմումի վերաբերյալ դիմումատուին տրվել է պարզաբանում, սակայն ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչություն պատասխան չի ուղարկվել:

24.03.2021թ. ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունից վարչական շրջանի դատախազությունում ստացվել է թիվ 16855920 քրեական գործով տուժողի ներկայացուցիչ Ս.Մինասյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված նույնաբովանդակ դիմումը՝ իր կողմից դեռևս 30.11.2020թ.վարչական շրջանի դատախազություն ուղարկված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դեմ բողոքի կապակցությամբ որևէ որոշում չստանալու վերաբերյալ: Վարչության պետի ուղեկցական գրությամբ խնդրվել է դիմումի քննարկման արդյունքների մասին հայտնել ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն: 26.03.2021թ. դիմումի վերաբերյալ դիմումատուին տրվել է պարզաբանում, սակայն ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն պատասխան չի ուղարկվել:

11.05.2021թ. վարչական շրջանի դատախազությունում Երևան քաղաքի դատախազությունից ստացվել է Թ.Արզումանյանի կողմից ՀՀ ՄԻՊ-ին հասցեագրված դիմումը: Երևան քաղաքի դատախազի տեղակալը ուղեկցական գրությամբ խնդրել է դիմումի քննարկման արդյունքների մասին հայտնել նաև ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն՝ ՀՀ ՄԻՊ-ին պատասխանելու նպատակով: Քննարկման արդյունքների մասին ՀՀ գլխավոր դատախազություն չի հայտնվել:

Արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ դիմումները վարչական շրջանի դատախազությունից հսկողությամբ ուղարկվել են քննչական բաժին կամ ոստիկանության բաժին, սակայն պատասխան չի ստացվել: Այսպես.

06.05.2021թ. վարչական շրջանի դատախազը՝ քննարկման արդյունքների մասին նաև վարչական շրջանի դատախազություն հայտնելու հանձնարարությամբ, քննչական բաժնի պետին է ուղարկում թիվ 16955820 քրեական գործով մեղադրյալներ Սերյոժա և Սամվել Հովսեփյանների դիմումները՝ օբյեկտիվ քննություն և առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ: Նշված դիմումի քննարկման արդյունքների մասին վարչական շրջանների դատախազություն չի հայտնվել: Ընդ որում, դրանից հետո 23.08.2021թ. մեղադրյալ Սամվել Հովսեփյանը նորից դիմում է հասցեագրել վարչական շրջանի դատախազին՝ ոչ օբյեկտիվ քննություն և առանձին քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ, որը կրկին, արդեն առանց հսկողության, ուղարկվել է քննչական բաժին, այն դեպքում, երբ պետք է պահանջվեր գործը և դիմումատուին տրվեր պարզաբանում:

27.04.2021թ. վարչական շրջանի դատախազը քննչական բաժին է ուղարկել թիվ 16108419 քրեական գործով տուժող Հ.Պետրոսյանի դիմումը, որով հանձնարարվել է անհապաղ հարցաքննել վերջինիս, ապա դրա արդյունքներով պայմանավորված՝ սեղմ ժամկետում կատարել քննչական և այլ դատավարական գործողություններ և արդյունքների մասին հայտնել նաև դատախազություն: Արդյունքների մասին դատախազություն չի հայտնվել:

23.08.2021թ. Երևան քաղաքի դատախազությունից վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Հերմինե Բաբաջանյանի և Վարդան Մարկոսյանի կողմից ՀՀ վարչապետին հասցեագրած դիմումը, որը վարչական շրջանի դատախազի կողմից ուղարկվել է ՀՀ ոստիկանության Մալաթիա բաժին՝ քննարկման արդյունքների մասին նաև վարչական շրջանի դատախազություն հայտնելու խնդրանքով: Քննարկման արդյունքների մասին վարչական շրջանի դատախազություն չի հայտնվել:

06.07.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Ա.Ամիրխանյանի միջնորդությունը՝ իրեն թիվ 16874019 քրեական գործով տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին, որը 07.07.2021թ. քննարկման նպատակով ուղարկվել է քննչական բաժին՝ քննարկման արդյունքների մասին նաև վարչական շրջանի դատախազություն հայտնելու հանձնարարությամբ: Քննարկման արդյունքների մասին դատախազություն չի հայտնվել:

Արձանագրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 4-րդ մասի խախտումներ, որի համաձայն քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազը այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը: Մասնավորապես, 11.02.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Ստեփան Ոսկանյանի բողոքը՝ 12.10.2020թ. քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ: Բողոքը մերժվել է 01.03.2021թ:

Արձանագրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 5-րդ մասի խախտումներ, որի համաձայն դատավարության մասնակցի բողոքը պետք է անհապաղ քննության առնվի քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից, բայց ոչ ուշ, քան այն ստանալու պահից 3 օրվա ընթացքում: Մասնավորապես, 08.02.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է Տ.Հայրապետյանի բողոքը՝ թիվ 16150121 քրեական գործը հարուցելու մասին 22.01.2021թ. որոշման դեմ: Բողոքը մերժվել է վարչական շրջանի դատախազի 12.02.2021թ. որոշմամբ, իսկ բողոքաբերին որոշումն ուղարկվել է 09.04.2021թ.:

Արձանագրվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի խախտումներ, որի համաձայն դատախազը քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման դեմ բողոքը ստանալու պահից 7 օրվա ընթացքում որոշում է կայացնում բողոքը մերժելու կամ բավարարելու մասին: Կայացված որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է բողոքը ներկայացնող անձին: Այսպես.

07.04.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է թիվ 13995720 քրեական գործով՝ Ա.Զագրյանի, Ա.Աեքսանյանի և Ն.Երիցյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազին ներկայացված քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման դեմ բողոքը, որը քննարկելու մասին դատախազի որոշումը թվագրված է 14.04.2021թ., սակայն այն, ըստ գրասենյակի աշխատակցի նշագրման, Ա.Զագրյանին և Ա.Ալեքսանյանին է ուղարկվել 03.06.2021թ.:

30.08.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է թիվ 16201921 քրեական գործով տուժող Հ.Խալաթյանի ներկայացուցիչ Գ.Մելիքյանի բողոքը՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դեմ: Բողոքը դատախազի կողմից քննարկվելու վերաբերյալ տվյալ վարույթում առկա չէ:

Իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել են նաև Երևան քաղաքի դատախազի տեղակալի գրություններին պատշաճ ուշադրություն չդարձնելու և դրանցում բարձրացված խնդիրներին հետևողական չլինելու դեպքեր: Այսպես.

Երևան քաղաքի դատախազությունում թիվ 16153521 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման օրինականությունը վերստուգելու ժամանակ քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ա.Ղազարյանին պատկանող խանութից անհայտ անձինք հափշտակել են 4.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ խմիչքներ և ծխախոտներ, սակայն տուժողին որևէ հարցադրում չի կատարվել այդ ապրանքների տեսակի և քանակի վերաբերյալ, քրեական գործին չի կցվել նաև խանութի գրանցված լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը:

Բացի այդ, վարույթ իրականացնող մարմինը դեպքի վայրից վերցրած տեսաձայնագրությունների լազերային սկավառակը որպես այլ ապացույց ճանաչելու փոխարեն որոշում է կայացրել այն իրեղեն ապացույց ճանաչելու մասին:

Երևան քաղաքի դատախազի տեղակալի գրությամբ խնդրվել է վարչական շրջանի դատախազին հանձնարարել քրեական գործը ստանալուն պես նշված հանգամանքների շուրջ կատարել քննություն, կրկին հանձնարարություն տալ հետաքննության մարմնին և հետևողականություն ցուցաբերել հետագայում վարույթն իրականացնող մարմնի կողմից նմանատիպ խախտումները բացառելու համար:

Նման պայմաններում քրեական գործը քննչական բաժին վերադարձնելիս ոչ մի հանձնարարություն չի տրվել:

Երևան քաղաքի դատախազությունում թիվ 16175321 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման օրինականության վերստուգման ընթացքում քրեական գործի

ուսումնասիրությամբ պարզվել է, որ դեռևս նյութերի նախապատրաստման ընթացքում Լևոն Ավետիսյանը բացատրություն է տվել, որ հափշտակված ավտոմեքենայում են եղել որոշ երկրապահի թղթերը և իրենց մյուս մեքենայի տեխանձնագիրը, սակայն նշված փաստաթղթերի հետ կապված որևէ քննություն, այդ թվում նաև Լ.Ավետիսյանին որևէ հարցադրում չի արվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի դատախազի տեղակալի գրությամբ խնդրվել է վարչական շրջանի դատախազին քրեական գործը ստանալուց հետո Լ.Ավետիսյանի կողմից տրված բացատրությունում նշված հանգամանքի շուրջ լրացուցիչ հարցաքննել վերջինիս և նշված հանգամանքի հաստատման դեպքում հանցագործությունը բացահայտվելուց հետո քննարկել այն կատարած անձի արարքին ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածով քրեաիրավական գնահատական տալու հարցը:

Բացի այդ, խնդրվել է հանձնարարել միջոցներ ձեռնարկել հափշտակված ավտոմեքենայի ՀՀ-ից դուրս գալու հանգամանքը պարզելու ուղղությամբ:

Նման պայմաններում քրեական գործը առանց որևէ հանձնարարության վերադարձվել է քննչական բաժին:

Կոլեգիան արձանագրում է նաև, որ իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել են նաև քննվող քրեական գործերով թույլ տրված մի շարք խախտումներ և բացթողումներ: Այսպես.

- **Թիվ 16160919 քրեական գործ**

14.01.2019թ. ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի ԱԳ և ԸԲԿ բաժանմունքից հետաքննության բաժանմունք նյութեր են ստացվել, որ 10.01.2019թ. ստացվել է Լիանա Նիկողոսյանի դիմումն այն մասին, որ 12.12.2018թ. «Աստղիկ» Բ/Կ բուժօգնության դիմելու ժամանակ գինեկոլոգ Ի.Պետրոսյանի, թերապևտ Ա.Գալստյանի և սոնոգրաֆիստ Ն.Ասատուրյանի կողմից ցուցաբերած ոչ պատշաճ բուժօգնության հետևանքով նույն թվականի դեկտեմբերի 31-ին վիրահատությամբ հեռացվել է իր արգանդափողը:

22.01.2019թ. հետաքննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին՝ նախապատրաստվող նյութերի ժամկետը 20 օրով երկարացնելու վերաբերյալ, որը 23.01.2021թ. թիվ 33/3-761 գրությամբ ուղարկել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն: Միջնորդության հետ նախապատրաստվող նյութերը դատախազություն չեն ուղարկվել, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հետաքննության մարմինը պարտավոր է նյութերի նախապատրաստման ժամկետը երկարացնելու մասին միջնորդության հետ նաև նյութերը այդ ժամկետը լրանալու օրվանից առնվազն երկու օր առաջ ներկայացնել հսկող դատախազին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում 22.01.2021թ. նշանակվել է հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն, որի որոշման պատճենը դատախազություն չի ուղարկվել: Քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն նշանակելու որոշմամբ առաջադրված հարցերի մեջ բացակայել է Լ.Նիկողոսյանի առողջությանը ոչ պատշաճ բուժօգնության արդյունքում պատճառված վնասի վերաբերյալ հարցադրումը, որպիսի հարցի պատասխանը կարևոր նշանակություն ունի ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված ենթադրյալ արարքը գնահատելու համար:

13.02.2021թ. որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քրեական գործ հարուցելու վերաբերյալ: Նախաքննության ընթացքում ստացվել է հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, որ

համաձայն՝ մանկաբարձ-գինեկոլոգի կողմից թույլ տրված թերությունները գտնվում են ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ հետագա բարդությունների և արգանդափողը հեռացնելու հետ, սակայն Լ.Նիկողոսյանի առողջությանը պատճառված վնասի չափը փորձաքննությամբ չի որոշվել, քանի որ նման հարցադրում չի կատարվել:

Վարույթն իրականացնող քննիչը փորձել է այդ թերությունը լրացնել փորձաքննությունը կատարած փորձագետների ցուցմունքներով, որոնք նշել են, որ Լ.Նիկողոսյանի առողջությանը վնաս չի պատճառվել:

Վարույթն իրականացնող քննիչը, հիմնվելով փորձագետների ցուցմունքներով արտահայտած վերոգրյալ դիրքորոշման վրա, այն պայմաններում, երբ փորձագետի ցուցմունքը երբեք չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությունը, իսկ քրեական գործով վարույթում մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը կարող են հաստատվել միայն դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ, 31.08.2021թ. որոշում է կայացրել գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

Քրեական գործի 04.09.2019թ. վարույթը կարճելու մասին որոշման օրինականությունը ստուգելու նպատակով ստացվել է վարչական շրջանների դատախազությունում և 09.09.2019թ. որոշման օրինականությունը ստուգված վիճակում ուղարկվել է Երևան քաղաքի դատախազություն՝ որոշման օրինականությունը վերստուգելու համար:

12.09.2019թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման դեմ Լ.Նիկողոսյանի բողոքը:

Բողոքում Լ.Նիկողոսյանը ի թիվս այլնի նշել է, որ բժշկուհի Ն.Ասատրյանի հետ առերեսման ժամանակ վերջինիս հետ եղած տղան իրեն ծանոթ քննիչի հետ խոսել է, որ փողը տված է, անհանգստանալու ոչինչ չկա: Լ. Նիկողոսյանի կողմից հայտնված նշված հանգամանքը ստուգելու ուղղությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել:

Լ. Նիկողոսյանի բողոքը վարչական շրջանի դատախազի 18.09.2019թ. որոշմամբ մերժվել է:

Թիվ 16160919 քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը Լ. Նիկողոսյանի կողմից բողոքարկվել է դատարան:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 28.10.2020թ. որոշմամբ Լ. Նիկողոսյանի բողոքը բավարարվել է: Դատարանի որոշումը վարչական շրջանի դատախազությունում ստացվել է 06.11.2020թ.:

Դատարանը որոշման մեջ նշել է, որ բողոքի քննությամբ հաստատված է համարում, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումը չի կայացվել նյութական և դատավարական օրենսդրության պահանջներին համապատասխան և չի բխում նախաքննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալներից: Դատարանը գտել է, որ վարույթն իրականացնող մարմինը չի կատարել անհրաժեշտ հնարավոր բոլոր դատավարական գործողությունները՝ քրեական վարույթի հետագա ընթացքն ու դատավարական ելքն ապահովելու համար: Դատարանը նաև փաստել է, որ քրեական գործի նկատմամբ դատավարական հսկողություն իրականացնող անձի՝ դատախազի կողմից կայացվել է գործի քննության տվյալ փուլի համար ոչ բավարար չափով պատճառաբանված որոշում, որով խախտվել են բողոք բերած անձի իրավունքները:

Նման պայմաններում, դատարանի որոշումը չի բողոքարկվել և ՀՀ գլխավոր դատախազի 26.10.2016թ. թիվ 20/2(3)-65-16 հանձնարարականի պահանջին համապատասխան քրեական հետապնդման մարմինների ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազին զեկուցագիր չի ներկայացվում:

01.12.2020թ. որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու մասին:

09.12.2020թ. քննիչը որոշում է կայացրել քրեական գործը վարույթ ընդունելու մասին, որից հետո մինչև 12.04.2021թ. ոչ մի քննչական գործողություն չի կատարվել: 12.04.2021թ. նոր նշանակվել է կրկնակի հանձնաժողովային փորձաքննություն, իսկ 14.04.2021թ. քրեական գործի վարույթը կասեցվել է:

Նման պայմաններում դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից երկու անգամ նախաքննության ժամկետ է երկարացվել:

- **Թիվ 16159920 քրեական գործ**

01.02.2020թ. ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում Ա.Բեռովայի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդություն է ուղարկվում ՌԴ իրավասու մարմիններին:

25.02.2021թ. որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կասեցնելու մասին, որում նշվում է, որ Ս.Եսայանի կողմից Ա.Բեռովայի վստահությունը չարաշահելու և խաբեության եղանակով խոշոր չափերի գումար հափշտակելու հանգամանքին անդրադարձ կկատարվի ՌԴ ուղարկված քննչական պահանջը ստանալուց հետո:

2021թ. օգոստոսին քննչական պահանջի պատասխանը ստացվել է, սակայն 15.12.2021թ, դրությամբ քրեական գործի վարույթը չի վերսկսվել, քննչական պահանջի արդյունքում ստացված նյութերը չեն թարգմանվել:

- **Թիվ 16873920 քրեական գործ**

07.07.2020թ. ժամը 16.00-ին «Աստղիկ» ԲԿ-ի ԻԹ բաժանմունքում սրտի ստենդավորման վիրահատությունից հետո բժիշկների ներկայությամբ մահացել է Ա.Թունյանը, որի մահը, ըստ վերջինիս որդու՝ Ա.Զավարյանի, վրա է հասել նշված Բ/Կ-ի բժիշկների կողմից սխալ բժշկական օգնություն ցույց տալու հետևանքով:

Փաստի առթիվ 06.08.2020թ. ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 16873920 քրեական գործը:

11.08.2020թ. քննիչը որոշում է կայացրել քրեական գործը վարույթ ընդունելու մասին, որից հետո 1 ամիս ոչ մի գործողություն չի կատարվել և 10.09.2020թ. զեկուցագիր է ներկայացրել՝ խնդրելով այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարել այլ քննիչի: Դրանից հետո, 18.09.2020թ. այլ քննիչ քրեական գործը ընդունել է վարույթ, որից հետո մինչև ժամկետը երկարացնելը 24.09.2020թ. Ա.Թունյանին տուժող է ճանաչել, հարցաքննել է մեկ վկայի և հարցում է կատարել Ալավերդու Բ/Կ: Նշվածները այս գործով երկու ամսվա մեջ արված միակ գործողություններն են:

07.07.2020թ. ժամը 17.00-ին, Ա.Թունյանի մահվան փաստի առթիվ «Աստղիկ» Բ/Կ-ում ծագած վիճաբանության ժամանակ վերջինիս հարազատները Ա.Զավարյանը և Շ.Անդրիկյանը դիտավորյալ հարվածել և կոտրել են Բ/Կ-ի ԻԹ բաժանմունքի 3 դռների և նկարի շրջանակի ապակին՝ պատճառելով 350.000 ՀՀ դրամի վնաս:

Դեպիք առթիվ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում 06.08.2020թ. ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 16873820 քրեական գործը:

11.08.2020թ. քննիչը որոշում է կայացրել քրեական գործը վարույթ ընդունելու մասին, որից հետո 1 ամիս ոչ մի գործողություն չի կատարվել և 10.09.2020թ. զեկուցագիր է ներկայացրել՝ խնդրելով այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարել այլ քննիչի:

Դրանից հետո, 18.09.2020թ. այլ քննիչ քրեական գործը ընդունել է վարույթ, որից հետո մինչև ժամկետը երկարացնելը ընդամենը 25.09.2020թ. հարցում է ուղարկել «Աստղիկ» Բ/Կ: Ընդ որում, նշված հարցումը կատարվել է դեռևս 24.08.2020թ. «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող փորձաքննության կատարման համար ներկայացված միջնորդության հիման վրա:

29.09.2020թ. որոշում է կայացվել թիվ 16873820 քրեական գործը միացնել թիվ 16873920 քրեական գործին և նախաքննությունը շարունակել 16873920 համարով:

Այսպիսով երկու քրեական գործով երկու ամսված մեջ կայացվել է տուժող ճանաչելու մասին մեկ որոշում, հարցաքննվել է մեկ վկա և երկու հարցում է ուղարկվել բժշկական կենտրոններ:

Նման պայմաններում նշված հանգամանքին նախաքննության ժամկետը երկարացնելու մասին որոշումը քննչական մարմին ուղարկելիս ոչ մի արձագանք չի եղել:

Հաջորդ մեկ ամսվա մեջ հարցաքննվել է ընդամենը մեկ վկա և 2 գրություն է ուղարկվել «Աստղիկ» ԲԿ:

Նման պայմաններում նորից առանց որևէ արձագանքի նախաքննության ժամկետը երկարացնելու մասին որոշումը վերադարձվել է քննչական բաժին:

21.10.2020թ. «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ից ստացվել է գրություն, որով խնդրել են բավարարել դեռևս 24.08.2020թ. ներկայացրած միջնորդությունը:

Տուժող Ա.Թ.-ի որդուն հարցաքննվել և նրա տուժողի իրավահաջորդ են ճանաչել 27.11.2020թ.՝ քրեական գործ հարուցելուց 3 ամիս 20 օր հետո, տուժող ճանաչելուց 2 ամիս 3 օր հետո:

Հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն նշանակվել է 27.11.2020թ.՝ քրեական գործ հարուցելուց 3 ամիս 20 օր հետո, դեպքից 4 ամիս 20 օր հետո:

04.12.2020թ. դատախազը որոշում է կայացրել նախաքննության ժամկետը երկարացնելու մասին, սակայն քննիչի նախաքննության ժամկետը երկարացնելու մասին 30.11.2020թ. միջնորդությունը քրեական գործում չկա:

27.11.2020թ.-ից մինչև 01.02.2021թ. քրեական գործով որևէ գործողություն կատարված չէ: 05.02.2021թ. ծանոթացվել է դատաապրանքագիտական փորձաքննության եզրակացությունը, որից հետո մինչև 24.03.2021թ. նորից որևէ գործողություն չի կատարվել:

30.12.2020թ. և 01.02.2021թ. նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունները բառացի նույնն են:

Նման պայմաններում դատախազի կողմից առանց որևէ դատախազական ներգործության միջոց կիրառելու բավարարվել է ներկայացված միջնորդությունները:

Քրեական գործի վարույթում առկա փաստաթղթերի համաձայն՝ 01.02.2021թ. վարչական շրջանի դատախազությունում ստացվել է նախաքննության ժամկետը երկարացնելու մասին 01.02.2021թ. միջնորդությունը, որով քննիչը միջնորդել է նախաքննության ժամկետը երկարացնել մեկ ամսով՝ մինչև 06.03.2021թ.: 03.02.2021թ. դատախազը որոշում է կայացրել նախաքննության ժամկետը երկարացնել մեկ ամսով՝ մինչև 06.03.2021թ. և 03.02.2021թ. ուղարկում է քննչական բաժին:

Նման պայմաններում, քրեական գործում առկա է քննիչի նախաքննության ժամկետը երկարացնելու մասին 01.02.2021թ. միջնորդություն, որով վերջինս միջնորդել է նախաքննության ժամկետը երկարացնել երկու ամսով՝ մինչև 06.04.2021թ.: Նշված

միջնորդության քննարկման արդյունքում դատախազի կողմից կայացված որոշումը քրեական գործում բացակայում է:

Արդյունքում՝ քրեական գործի վարույթը կասեցվել է 31.03.2021թ., այն դեպքում, երբ դատախազի կողմից նախաքննության ժամկետը երկարացվել է մինչև 06.03.2021թ.:

- **Թիվ 16859019 քրեական գործ**

12.07.2019թ.՝ ժամը 19.50-ին, շտապօգնության 7-րդ ենթակայանից ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին հաղորդում է ստացվել այն մասին, որ շտապօգնության խումբը կանչով մեկնել է Ռաֆֆու 55 շենք 42 բնակարան, որտեղ Կ.Միքայելյանը հայտնել է, որ նույն օրը ժամը 19.00-ին, շենքի բակում ծագած վիճաբանության ժամանակ ոմն Տիգրանը, Ալեքսանդրը և ևս մի քանի անձինք հարվածներ են հասցրել մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Դեպքի առթիվ 22.07.2019թ. ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 16859019 քրեական գործը:

15.07.2019թ.՝ ժամը 15.00-ին, ՀՀ ոստիկանությանՆոր Նորքի բաժնում հաղորդում, ապա նաև բացատրություն է տվել Ռ.Բարսեղյանը այն մասին, որ 03.07.2019թ.՝ ժամը 14.00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ վարչական շենքի ներսում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ, ֆինանսաբյուջետային և պլանավորման վարչության աշխատակից Կ.Միքայելյանը, ձեռքերով հրել է իրեն, այնուհետև ոլորել է աջ ու ձախ ձեռքերն ու քաշքշել՝ կատարելով այլ բռնի գործողություններ, ինչի արդյունքում իրեն պատճառվել է ֆիզիկական ցավ և մարմնական վնասվածքներ:

Դեպքի առթիվ 25.07.2019թ. ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 17867619 քրեական գործը:

21.08.2019թ. որոշում է կայացվել թիվ 17867619 քրեական գործը թիվ 16859019 քրեական գործին միացնելու մասին և նախաքննությունը շարունակվել է 16859019 համարով:

Վարույթն իրականացնող մարմինը, գնահատելով քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալները, հանգել է հետևության, որ Կ.Միքայելյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը և 27.12.2019թ. որոշում է կայացրել վերջինիս նկատմամբ **քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ մի դեպքում հանցակազմի բացակայության, մյուս դեպքում՝ նրա արարքն իրավաչափ համարելու հիմքով:**

Վերոնշյալ որոշման դեմ դիմող Ռ.Բարսեղյանը բողոք է ներկայացրել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն, որը, վարչական շրջանի դատախազի՝ 23.01.2020թ. որոշմամբ մերժվել է:

Դատախազի որոշման դեմ 04.03.2020թ. Ռ.Բարսեղյանը բողոք է ներկայացրել Առաջին ատյանի դատարան:

Առաջին ատյանի դատարանի՝ 10.08.2020թ. որոշմամբ դիմող Ռ.Բարսեղյանի քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման դեմ բողոքը բավարարել է և պարտավորեցրել է վարույթն իրականացնող մարմնին վերացնել տուժող Ռ.Բարսեղյանի իրավունքների և ազատությունների խախտումը:

Որոշման մեջ դատարանը նշել է, որ 27.12.2019թ. քրեական հետապնդում դադարեցնելու մասին որոշումը ենթակա է վերացման:

Դատարանը միաժամանակ փաստել է, որ 27.12.2019թ. քրեական հետապնդում դադարեցնելու մասին որոշման դեմ տուժողի ներկայացուցիչների կողմից ներկայացված բողոքի կապակցությամբ վարչական շրջանի դատախազի կողմից օրենքով սահմանված կարգով որոշում չկայացնելը և դատախազության դատախազ Վ.Պետրոսյանի կողմից դրան

գրությամբ պատասխանելը, իրավաչափ չի եղել, քանի որ այդ կերպ տուժողի ներկայացուցիչների բողոք բերելու իրավունքն ածանցվել է տուժողի նշված իրավունքից, ինչն անթույլատրելի է: Ընդ որում տուժողի ներկայացուցիչների բողոքում բերված փաստարկները էապես տարբերվել են տուժողի բողոքում նշված փաստարկներից: Նման պայմաններում դատարանը գտել է, որ վարչական շրջանի դատախազության կողմից դրսևորվել է անգործություն, որով խախտվել է տուժող Ռ.Բարսեղյանի իրավունքները:

Դատարանի վերոնշյալ որոշման դեմ բողոք է ներկայացրել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազը:

Վերաքննիչ քրեական դատարանի՝ 01.12.2020թ. որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 10.08.2020թ. որոշումը՝ «քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման դեմ բողոքը քննելու մասին» թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ վարչական շրջանի դատախազի վերաքննիչ բողոքը մերժվել է:

Վերաքննիչ քրեական դատարանի վերոնշյալ որոշումը ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ վճռաբեկ բողոք բերելու հարցը քննարկելու համար, ինչը, սակայն, նպատակահարմ չի համարվել:

Վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը ուժի մեջ մտնելուց հետո՝ 08.01.2021թ., վարչական շրջանների դատախազի կողմից որոշում է կայացվել տուժողի ներկայացուցիչների կողմից դեռևս 2019թ. ներկայացված 27.12.2019թ. քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման դեմ բերված բողոքը մերժելու մասին, այն դեպքում, երբ այդ որոշումը դատարանի կողմից վերացված է:

Դրանից հետո Ռ.Բարսեղյանի փաստաբան Լ.Արիստակեսյանի կողմից վարչական շրջանի դատախազին, ՀՀ գլխավոր դատախազին 2021թ. հունվար, փետրվար ամիսներին հասցեագրվել են մի շարք դիմումներ, որոնցում վերջինս նշել է, որ դատարանի որոշումը չի կատարվում և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը չի վերացվում:

Ի պատասխան այդ դիմումների՝ դիմումատուին հայտնվել է, որ վերաքննիչ դատարանի որոշման արդյունքում վարչական շրջանի դատախազի կողմից որոշում է կայացվել տուժողի ներկայացուցիչների բողոքը քննության առնելու մասին և ուղարկվել է 08.01.2021թ. որոշման պատճենը:

Դրանից հետո Լ.Արիստակեսյանի կողմից նորից դիմումներ են ստացվել հասցեագրված ՀՀ վարչապետին, ՀՀ գլխավոր դատախազին, վարչական շրջանի դատախազին, որից հետո միայն՝ 08.04.2021թ., որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին:

- **Թիվ 16965820 քրեական գործ**

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազին հասցեագրված Ա.Եղիյանի՝ «Էկոտոն» ՍՊԸ կողմից իր վստահությունը չարաշահելու եղանակով զգալի չափերով՝ 400.000 ՀՀ դրամ խարդախությամբ տիրանալու վերաբերյալ դիմումը՝ ստուգման համար, 05.08.2020թ ուղարկվել է ՀՀ ոստիկանության բաժին: Գրությամբ խնդրվել է դիմումի քննարկման արդյունքների մասին հայտնել վարչական շրջանների դատախազություն:

16.09.2021թ., ի լրումն նախորդ դիմումի, ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին է ուղարկվել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազին հասցեագրված Ա.Եղիյանի 01.09.2020թ. դիմումը՝ «Էկոտոն» ՍՊԸ կողմից իր վստահությունը չարաշահելու եղանակով զգալի չափերով՝ 400.000 ՀՀ դրամ խարդախությամբ տիրանալու վերաբերյալ լրացուցիչ տվյալներ ներկայացնելու վերաբերյալ: Գրությամբ խնդրվել է դիմումի քննարկման արդյունքների մասին հայտնել վարչական շրջանների դատախազություն:

24.11.2020թ. ստացվել է ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի գրությունը հասցեագրված վարչական շրջանի դատախազին, որում նշված է, որ ի պատասխան

06.08.2020թ. գրության հայտնում է, որ Ա.Եղիյանի և «Էկոտուն» ՍՊԸ միջև առկա վճարովի գնման հայտի ամրագրման պայմանագիր, որը ենթակա է կարգավորման դատական կարգով:

ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի գրության վրա վարչական շրջանի դատախազը մակագրել է՝ պահանջել գրության հիմքում ընկած փաստաթղթերը և զեկուցել, սակայն որևէ փաստաթուղթ չի պահանջվել:

10.12.2020թ. Ա.Եղիյանի կողմից վարչական շրջանի դատախազին հասցեագրված նոր դիմում է ստացվել, որի հիման վրա 19.12.2020թ. ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ: Ընդ որում, հարուցման որոշման մեջ նշված է, որ պայմանագիրը դեռևս 14.10.2020թ. ճանաչվել է անվավեր, այն դեպքում, երբ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի 24.11.2020թ. գրությամբ հայտնվել էր, որ Ա.Եղիյանի և «Էկոտուն» ՍՊԸ միջև առկա է վճարովի գնման հայտի ամրագրման պայմանագիր:

Անհարկի ձգձգումների պատճառով քրեական գործը հարուցվել է շուրջ 3 ամիս ուշացումով:

Ընդ որում, նշված քրեական գործը հարուցելու և քննիչին հանձնելու մասին որոշումը կայացվել է 19.12.2020թ., սակայն քննիչի կողմից վարույթ է ընդունվել 15.01.2021թ.: Այսինքն հարուցումից հետո ևս քրեական գործով 26 օր քննություն չի կատարվել:

- **Թիվ 16965220 քրեական գործ**

2020թ. դեկտեմբերի 12-ի թիվ 8457 ամփոփագրով հաղորդվել է, որ 12.12.2020թ. ժամը 02.00-ի սահմաններում Ա.Բաղդասարյանը ՀՀ ոստիկանության բաժնում հաղորդում է տալիս այն մասին, որ 11.12.2020թ. ժամը 20.00-ի սահմաններում «Facebook» սոցիալական ցանցի միջոցով վիճաբանել է «Edgar Rashoyan» օգտատիրոջ հետ, որից հետո պայմանավորվել են հանդիպել, սակայն հանդիպումն իրեն անհայտ պատճառներով չի կայացել: Ժամը 23.00-ի սահմաններում Ա.Բաղդասարյանին է զանգահարել անհայտ քաղաքացի և անձնական հարցի շուրջ պայմանավորվել են հանդիպել, որից հետո Երևան քաղաքի Վերֆել փողոցում հանդիպման ժամանակ իրեն է զանգահարած քաղաքացին 10 հոգու հետ միասին կոպիտ կերպով խախտել են հասարակական կարգը, փայտե մահակներով հարվածել են իր մեքենային, պատճառելով գույքային վնաս, և մեկ անգամ հարվածել են իր դեմքին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

2020թ. դեկտեմբերի 14-ի ամփոփագրով հայտնվել է, որ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ 12.12.2020թ. Ա.Բաղդասարյանի հետ վիճաբանող անձիք հանդիսանում են Է.Ռաշոյանը, Գ.Հայրապետյանը և ինքնությունը չպարզված մի քանի անձինք:

Նման պայմաններում նշված դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական գործ հարուցելու և գործը քննիչին հանձնելու որոշում է կայացվել 16.12.2020թ.:

21.12.2020թ. այդ որոշումը և քրեական գործը՝ 27 թերթ, ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի թիվ 13211 գրությամբ ուղարկվում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն և քննչական բաժին՝ հետագա ընթացքը լուծելու համար: Այս որոշումը դատախազությունում ստացվել է 22.12.2020թ.:

22.12.2020թ. հաղորդումներ են ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն և Երևան քաղաքի դատախազություն, որոնցում նշված է, որ թիվ 16965220 քրեական գործը նախաքննություն կատարելու համար ուղարկվել է քննչական բաժին:

Քրեական գործով հսկողական վարույթում վարույթում առկա է ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի նույն ամսաթվով /21.12.2020թ./ և նույն ելքի համարով /13211/ ևս մեկ գրություն քրեական գործը դատախազություն և քննչական բաժին ուղարկելու մասին, որում արդեն քրեական գործի թերթերի թիվը նշված է 40 և որին կցված է քրեական գործը քննիչին հանձնելու մասին 26.12.2020թ. որոշում: Այս գրությունը դատախազությունում ստացվել է 14.01.2021թ.: Հատկանշական է, որ քրեական գործը քննիչին հանձնելու մասին 26.12.2020թ. որոշումը ուղարկվել է 21.12.2020թ.:

Քրեական գործի հսկողական վարույթում առկա է նաև ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի պետի նույն ամսաթվով /21.12.2020թ./ և նույն ելքի համարով /13211/ երրորդ գրություն, որին արդեն կցված է քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին որոշում:

Նշված վերաբերյալ վարչական շրջանի դատախազության կողմից որևէ արձագանք չկա:

Ասպիսով պարզ չէ, թե երբ է կայացվել քրեական գործը քննիչին հանձնելու մասին որոշումը: Այդուհանդերձ, եթե նույնիսկ այդ որոշումը կայացվել է 26.12.2020թ., ապա պետք է փաստել, որ դրանից հետո 20 օր նշված քրեական գործով քննություն չի կատարվել, քանի որ քրեական գործը քննիչի կողմից վարույթ է ընդունվել 15.01.2021թ.:

Պետք է նշել, որ չնայած նրան, որ քրեական գործը հարուցվել է 16.12.2020թ., սակայն քննիչի կողմից կայացված որոշումներում որպես հարուցման ամսաթիվ նշված է 26.12.2020թ.:

ՀՀ գլխավոր դատախազությունում քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման օրինականության վերստուգման ընթացքում քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ վարույթն իրականացնող մարմինը իր որոշմամբ հաստատված է համարել հանգամանքներ և եկել է այնպիսի հետևությունների, որոնք ոչ միայն հակասում են միմյանց, այլև ըստ էության, բացառում են:

Մասնավորապես, քննիչը, ըստ էության, ենթադրյալ խուլիգանության դեպքի վերաբերյալ ունենալով հնարավոր մասնակցություն ունեցած ընդամենը երկու անձի տվյալ, այն է՝ Գ.հայրապետյանի և Է.Ռաշոյանի, կատարված նախաքննությամբ եզրահանգել է, որ վերջիններիս մասնակցությունը տեղի ունեցած միջադեպին չի հիմնավորվել, միևնույն ժամանակ հանգել է այն հետևության, որ Գ. Հայրապետյանի, Է. Ռաշոյանի, անհայտ անձանց և Ա.Բաղդասարյանի ու Վ.Գրիգորյանի միջև տեղի ունեցած միջադեպի պատճառը և առիթը եղել է «Facebook» սոցիալական ցանցով Ա.Բաղդասարյանի կոմից կատարված գրառումները, որպիսի պայմաններում Է.Ռաշոյանի և Գ.Հայրապետյանի արարքներում բացակայում է հանցակազմը:

Այսինքն, վարույթն իրականացնող մարմինը հաստատված չի համարել անձանց մասնակցությունը միջադեպին, մյուս դեպքում հաստատված է համարում նույն անձանց միջև վեճի առիթը կամ պատճառը, ինչը անթույլատրելի է:

Բացի այդ, վարույթն իրականացնող մարմինը բավարար միջոցներ չի ձեռնարկել բացահայտելու դեպքի բոլոր հանգամանքները:

Այսպես, միջադեպին մասնակից այլ անձանց ինքնությունը պարզելու ուղղությամբ, ըստ էության, որևէ գործողություն չի կատարել՝ սահմանափակվելով Գ. Հայրապետյանի և Է. Ռաշոյանի հարազատների և Գ.Հայրապետյանի մեկ ընկերոջ մակերեսային ցուցմունքներով՝ դրանք ստուգելու ուղղությամբ պատշաճ միջոցներ չձեռնարկելով:

Մասնավորապես, գործով չեն ստացվել հանցագործություն կատարելու օրվա և ժամի՝ Գ. Հայրապետյանի հետ կապի մեջ գտնված անձանց հեռախոսազանգերի վերծանումները,

հեռախոսազանգերը սպասարկած ալեհավաք կայանների տեղակայման վայրերը, ինչը հնարավորություն կտար պարզելու միջադեպին մասնակից անհայտ անձանց տվյալները:

Դեպքի հանգամանքների շուրջ չի հարցաքննվել նաև «BMW» մակնիշի 01xx913 հաշվառման համարանիշով ավտոմեքենայի սեփականատեր Մ.Կարապետյանը, որը դեպքի օրը՝ ժամը 22.59-ին, Երևան քաղաքի Կիևյան փողոցում արագ վարելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության: Ավելին, դեռևս 10.03.2021թ. օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու մասին քննիչի կողմից ծավալուն հանձնարարություն է տրվել ոստիկանության Մալաթիայի բաժնին, որտեղ, ի թիվս այլնի, պահանջվել էր հայտնաբերել և վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել Մ.Կարապետյանին, ինչպես նաև պարզել Երևան քաղաքի Վերֆելի փողոցում, Աթենքի և Ադմիրալ Իսակովի փողոցների խաչմերուկներում տեսանկարահանող սարքերի առկայությունը և դրանց առկայության դեպքում հետաքրքրող տվյալները ներկայացնել վարույթն իրականացնող մարմնին: Սակայն, չստանալով այդ հանձնարարության պատասխանը, քննիչը լուծել է գործի ընթացքը:

Նման պայմաններում կարճման որոշման օրինականությունը ստուգվել է: Վերը նշվածի մասով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի գրությամբ ուշադրություն է հրավիրվել՝ հետագայում նման խախտումներ թույլ չտալու համար:

Այդուհանդերձ, վարույթը կարճված քրեական գործը՝ օրինականությունը ստուգված վիճակում հետ է վերադարձվել է քննչական բաժին՝ առանց ՀՀ գլխավոր դատախազի կողմից նշված խախտումների վրա ուշադրություն հրավիրելու:

- **Թիվ 16870520 քրեական գործ**

23.06.2020թ. ժամը 12.00-ի սահմաններում, Ա.Սարգսյանը ծխախոտ ծխելիս չայրված մնացորդները նետել է Ռ.Մելիքյան փողոցի հարակից խոտածածկ տարածքում, հայորդաց տան հարակից հատվածում, որի հետևանքով բռնկվել է կրակ՝ այրելով բազմաթիվ ծառեր:

Դեպքի առթիվ 23.06.2020թ. ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է քրեական գործ:

30.12.2020թ. որոշում է կայացվել Ա.Սարգսյանին ներգրավվել որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Ծանուցագիր է ուղարկվել Ա. Սարգսյանի հաշվառման հասցեով, սակայն վերջինս, առանց հարգելի պատճառի, չի ներկայացել հարցաքննության և այդ հիմքով որոշում է կայացվել նրան բերման ենթարկելու մասին, սակայն ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնից ստացվել է գրություն, որ Ա. Սարգսյանին հնարավոր չէ հայտնաբերել:

Նույն օրը որոշում է կայացվել մեղադրյալ Ա.Սարգսյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը և որոշում է կայացվել քրեական գործի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կասեցնելու մասին:

19.01.2021թ. Ա.Սարգսյանը հայտնաբերվել է և ներկայացվել ՀՀ ՔԿ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին:

Նույն օրը որոշում է կայացվել քրեական գործի վարույթը վերսկսելու մասին: Ընդ որում, քննիչը որոշման մեջ նշում է, որ վերանայել է թիվ 16870520 քրեական գործի նյութերը, այն դեպքում, երբ քրեական գործը քննչական բաժնում չի եղել:

20.01.2021թ. ՀՀ ՔԿ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի պետը վարչական շրջանի դատախազին է ուղարկել քրեական գործի վարույթը վերսկսելու մասին որոշումը՝ միաժամանակ խնդրելով քննչական բաժին ուղարկել քրեական գործը, որը

վարույթը կասեցնելու մասին որոշման օրինականությունը վերստուգելու նպատակով գտնվում է Երևան քաղաքի դատախազությունում:

Նման պայմաններում վարչական շրջանի դատախազությունում միջոցներ չեն ձեռնարկվել քրեական գործը Երևան քաղաքի դատախազությունից հետ ստանալու և քննչական բաժին ուղարկելու ուղղությամբ:

Ընդ որում, ըստ քրեական գործի վարույթում առկա փաստաթղթերի, 19.02.2021թ. վարչական շրջանների դատախազության դատախազ Վ.Վարագյանի կողմից որոշում է կայացվել քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացնելու մասին: Այս առումով պետք է նշել, որ վարույթում բացակայում է նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը վարչական շրջանի դատախազին ուղարկելու քննչական բաժնի պետի ուղեկցական գրությունը, ինչպես նաև նախաքննության ժամկետը երկարացնելու մասին դատախազի որոշումը քննչական բաժին ուղարկելու վարչական շրջանի դատախազի ուղեկցական գրությունը: Բացի այդ պարզ չէ, թե ինչու է քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացրել Վ.Վարագյանը, այլ ոչ թե քրեական գործով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազ Ս.Մովսիսյանը:

Քրեական գործի վարույթը վերսկսելուց 45 հետո միայն՝ 04.03.2021թ., քրեական գործը Երևան քաղաքի դատախազությունից ստացվել է վարչական շրջանի դատախազությունում:

06.03.2021թ. վարչական շրջանի դատախազի կողմից քրեական գործը ուղարկվել է քննչական բաժին՝ նշելով, որ վերադարձվում է վարույթը կասեցված քրեական գործը՝ կայացված որոշումը ստուգված վիճակում, այն դեպքում, երբ քրեական գործը դեռևս 19.01.2021թ.-ից վերսկսված է:

Քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել Ա.Սարգսյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին՝ վերջինիս կողմից դիտավորությամբ ծառեր այրելու և Երևան քաղաքին խոշոր չափերի՝ 1.029.000 ՀՀ դրամի գույքային վնաս պատճառելու համար, մինչդեռ վերջինիս արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի համատեքստում, որը պատասխանատվություն է նախատեսում ծառերի, թփերի ապօրինի ոչնչացման համար:

- **Թիվ 16156321 քրեական գործ**

19.12.2020թ. ժամը 21.00-ին YouTube սոցիալական ցանցի Hraparak.am կայքէջում զետեղվել է տեսաձայնագրություն, որ Եռաբլուր զինվորական պանթեոնում երկու քաղաքացիներ փոխադարձ հարվածներ են հասցնում միմյանց:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Եռաբլուր զինվորական պանթեոնը գտնվում է ՀՀ ՊՆ հաշվեկշռում և հանդիսանում է թիվ 61482 զորամաս:

Հաշվի առնելով վերոգրյալը, 25.12.2020թ. որոշում է կայացվել նյութերը ըստ ենթակայության ՀՀ ՊՆ ՌՈ ուղարկելու մասին, սակայն նյութերը ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնից ելք են եղել 30.12.2020թ., իսկ ՀՀ ՊՆ ՌՈ մուտք են եղել՝ 14.01.2021թ.:

ՀՀ ՊՆ ՌՈ պետի 14.01.2021թ. գրությամբ նյութերը վերադարձվել են ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին այն պատճառաբանությամբ, որ նյութերը ՀՀ ոստիկանության բաժնից ելք են եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված 10-օրյա ժամկետը լրանալուց հետո:

Ստանալով նյութերը 21.01.2021թ. /դեպքից 34 օր հետո/ որոշում է կայացվել թիվ 16156221 քրեական գործ հարուցելու և քննիչին հանձնելու մասին: Քրեական գործը քննիչի կողմից վարույթ է ընդունվել 29.01.2021թ.:

20.12.2020թ. «Black Zone» ֆեյսբուքյան էջում զետեղվել է տեսաձայնագրություն, որ Եռաբլուր զինվորական պանթեոնում երկու քաղաքացիներ փոխադարձ հարվածներ հասցնում միմյանց:

Նույն դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության նույն բաժնում նախապատրաստվել են երկու տարբեր նյութեր: Այս նյութերով նույնպես պարզվել է, որ Եռաբլուր զինվորական պանթեոնը գտնվում է ՀՀ ՊՆ հաշվեկշռում և հանդիսանում է թիվ 61482 զորամաս:

Հաշվի առնելով վերոգրյալը, 25.12.2020թ. որոշում է կայացվել նյութերը ըստ ենթակայության՝ ՀՀ ՊՆ ՌՈ ուղարկելու մասին, սակայն նյութերը ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնից ելքագրվել են 30.12.2020թ., իսկ ՀՀ ՊՆ ՌՈ մուտք են եղել 14.01.2021թ.:

ՀՀ ՊՆ ՌՈ պետի 14.01.2021թ. գրությամբ նյութերը վերադարձվել են ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին այն պատճառաբանությամբ, որ նյութերը ՀՀ ոստիկանության բաժնից ելք են եղել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված 10-օրյա ժամկետը լրանալուց հետո:

Ստանալով նյութերը 21.01.2021թ. /դեպքից 33 օր հետո/ որոշում է կայացվել թիվ 16156221 քրեական գործ հարուցելու և քննիչին հանձնելու մասին:

17.03.2021թ. որոշում է կայացվել երկու քրեական գործերը մեկ վարույթում միացնելու մասին:

Քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանում առկա է քրեական գործի նախաքննության ժամկետն երկարացնելու երեք միջնորդություն, սակայն ընդամենը դրանք բավարարելու մասին դատախազի թվով երկու, սակայն բառացի նույնաբովանդակ որոշում: 18.03.2021թ. թվագրված որոշմամբ նախաքննության ժամկետը մեկ ամսով երկարացվել է, բայց որոշման մեջ նշված է, որ ժամկետը լրացել է ապրիլի 21-ին և ժամկետը երկարացվում է մեկ ամսով մինչև մայիսի 21-ը, մինչդեռ քրեական գործի վարույթը կասեցվել է 2021թ. հունիսի 7-ին:

- **Թիվ 16200820 քրեական գործ**

«Երևանի թիվ 190 դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կ.Զատիկյանի կողմից պաշտոնեական դիրքը չարաշահելու վերաբերյալ դեպքի առթիվ 28.02.2020թ. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը 23.04.2020թ. ցուցում է տվել անհապաղ դեպքի հանգամանքների շուրջ հանգամանորեն հարցաքննել Ժ.Տոնոյանին և մինչև 30.04.2020թ. քրեական գործը կրկին ուղարկել դատախազություն:

Սահմանված ժամկետում ցուցումի պահանջը չի կատարվել, Ժ.Տոնոյանը չի հարցաքննվել, իսկ քրեական գործն էլ չի ուղարկվել վարչական շրջանի դատախազություն:

Նման պայմաններում դատախազի կողմից ներգործության որևէ միջոց չի կիրառվել:

Վարչական շրջանի դատախազը 25.05.2020թ. հանձնարարություն է տվել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ, որի պատասխանը չի ստացվել:

Դրանից 4 ու կես ամիս հետո՝ 01.10.2020թ. վարչական շրջանի դատախազը նոր հանձնարարություն է ուղարկել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի պետին՝ միաժամանակ նշելով, որ 25.05.2020թ. հանձնարարության պատասխանը չի ստացվել: Գրությամբ հանձնարարվել է նաև վարչական շրջանի դատախազություն ներկայացնել տեղեկություններ՝ քրեական գործով իրականացված օպերատիվ-հետախուզական

միջոցառումների մասին՝ նշելով, թե կոնկրետ ինչ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ են իրականացվել, դրանք ինչ արդյունք են տվել, և ներկայումս ինչ փուլում են գտնվում օպերատիվ աշխատանքները: Նշված հանձնարարականի պատասխանը ստացվել է քրեական գործի վարույթը կարճելուց 17 օր հետո՝ 15.12.2020թ.՝ առանց վերջին խնդրանքի կատարման:

Կոլեգիայի նիստում քննարկման առարկա դարձավ նաև արձանագրված խախտումների ժամանակային օրինաչափությունները, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազների կողմից դատախազական ներգործության միջոցների կիրառման պրակտիկան: Ա. Մարուխյանը նշեց, որ առանձին ուղղություններով, մասնավորապես Հայաստանի Հանրապետության ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության թիվ 1495-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչների կիրառման պահպանման հարցում 2021թ. առաջին տասը ամիսներին արձանագրվել է հետընթաց: Նշվեց, որ թեև որոշ դեպքերում ծառայողական քննություն անցկացնելու միջնորդություններ հետաքննության և նախաքննության մարմինների՝ խախտումներ թույլ տված աշխատակիցների նկատմամբ միջնորդություններ ներկայացվել են, սակայն ՀՀ Ոստիկանության Մալաթիայի բաժնի պետի և ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի պետի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդություններ 2020թ. և 2021թ. առաջին տասը ամիսների ընթացքում չի ներկայացվել:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Դ. Վեքիլյանն իր խոսքում նշեց, որ ստուգման արդյունքների վերաբերյալ առարկություններ չունի, ինչպես նաև հայտնեց, որ ստուգման ենթակա ժամանակաշրջանում վարչական շրջանի դատախազությունն աշխատել է գերծանրաբեռնված ռեժիմով՝ ներկայացնելով դատախազական գործունեության առանձին ուղղությունների վերաբերյալ թվային տվյալներ, ինչով էլ պայմանավորված են եղել արձանագրված խախտումները:

Ամփոփելով ստուգման արդյունքները՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա. Դավթյանն իր խոսքում շնորհակալություն հայտնեց ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում համալիր ստուգում իրականացնելու միջնորդության համար՝ կարևորելով նման պրակտիկայի շարունակականությունը, մասնավորապես՝ ՀՀ դատախազության այլ ստորաբաժանումներում ևս նմանատիպ ստուգումներ անցկացնելու անհրաժեշտությունը՝ խնդիրներն ու թերությունները վերհանելու և դրանց համարժեք արձագանք ապահովելու նպատակով: ՀՀ գլխավոր դատախազը շնորհակալություն հայտնեց նաև հանձնախմբի անդամներին իրականացված մանրակրկիտ և օբյեկտիվ ստուգման համար:

Իր խոսքում Ա. Դավթյանը շեշտեց նաև այն հանգամանքը, որ ներկայումս դատախազական ամենօրյա գործունեության գրեթե բոլոր հարցերը կարգավորված են ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների հանձնարարականներով: Նման պայմաններում կարևորվեց նշված փաստաթղթերի դրույթների անշեղ կատարման անհրաժեշտությունը, ինչպես նաև դատախազների կողմից իրենց գործառույթների իրականացման ընթացքում ծուլության և անբարեխղճության ցանկացած դրսևորում արմատախիլ անելու հրամայականը: Ա. Դավթյանը ՀՀ դատախազության բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարեց իրենց ենթակա դատախազներից, ինչպես նաև իրենց ղեկավարած

ստորաբաժանումների վարչական տարածքների հետաքննության և նախաքննության մարմինների աշխատակիցներից պահանջել բացառել սեփական պաշտոնի և աշխատանքի նկատմամբ անփույթ և անբարեխիղճ վերաբերմունքը՝ շեշտելով, որ նման անձինք տեղ չունեն իրավապահ համակարգում: Ընդ որում, Ա. Դավթյանը կարևորեց հատկապես հետաքննության և նախաքննության մարմինների հետ հարաբերություններում նման գործելակերպ որդեգրելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ վարչական շրջանի կամ մարզի դատախազի համար, որպես տվյալ տարածքի իրավապահ մարմինների դատավարական ղեկավար, սեփական պատվի հարցն է իր կողմից տրված ցուցումների և հանձնարարականների անշեղ և առանց ձգձգումների կատարումը համապատասխան մարմինների աշխատակիցների կողմից:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին

ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների 2021թ. գործունեության ամփոփումներն իրականացնելիս Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում իրականացված համալիր ստուգման ուղղությունների համադրմամբ ստուգել դատախազության տվյալ ստորաբաժանման գործունեությունում քրեական և քրեադատավարական օրենսդրության դրույթների, ՀՀ դատախազության կոլեգիայի, ՀՀ գլխավոր դատախազի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների հանձնարարականների պահպանման վիճակը, ստուգման արդյունքներով դատախազության տվյալ ստորաբաժանման գործունեության համալիր ստուգում իրականացնելու առերևույթ հիմքեր հայտնաբերելու դեպքում այդ մասին պատճառաբանված միջնորդությամբ դիմել ՀՀ գլխավոր դատախազին:

2. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝

1) Տասնօրյա ժամկետում նախապատրաստել ՀՀ գլխավոր դատախազի գրության նախագիծ՝ ուղղված ՀՀ ոստիկանության պետին և ՀՀ քննչական կոմիտեի նախագահին՝ ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի և ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների մանրամասն նկարագրությամբ և խախտումներ թույլ տված անձանց նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությամբ:

2) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության՝ խախտումներ թույլ տված աշխատակիցների նկատմամբ սահմանված կարգով իրականացնել կարգապահական վարույթ:

3. ՀՀ դատախազության կոլեգիայի անդամներին

Մեկամսյա ժամկետում ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել առաջարկություններ՝ ՀՀ դատախազության տարածքային ստորաբաժանումների աշխատանքների նկատմամբ վերահսկողական մեխանիզմների արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

4. Մարզերի, Երևան քաղաքի վարչական շրջանների, կայազորների զինվորական դատախազներին՝

Օպերատիվ խորհրդակցություններում քննարկել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազությունում իրականացված համալիր ստուգման արդյունքներով հայտնաբերված խախտումները, ձեռնարկել գործուն միջոցառումներ համապատասխան ստորաբաժանման աշխատանքներում նմանատիպ խախտումները բացառելու ուղղությամբ:

2. Նորանշանակ դատախազների երդման արարողություն

Լսեցին՝ Կ. Ազիզյանին

Երդման տեքստն ընթերցեցին և ստորագրեցին

1. Արման Ռոբերտի Ալիխանյան - Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության դատախազ
2. Կարեն Գրիգորի Ղազարյան - Գորիսի կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազ
3. Հարություն Գառնիկի Անդրեասյան - Գորիսի կայազորի զինվորական դատախազության դատախազ
4. Վարդան Սամվելի Արսենյան - Գորիսի կայազորի զինվորական դատախազության դատախազ
5. Նարեկ Լեռնիկի Արշակյան - Սյունիքի մարզի դատախազության դատախազ
6. Վահե Ժորայի Գրիգորյան - Տավուշի մարզի դատախազության ավագ դատախազ
7. Հովհաննես Ավետիքի Աղասարյան - Տավուշի մարզի դատախազության դատախազ
8. Հայկանուշ Տիգրանի Ավալյան - Շիրակի մարզի դատախազության դատախազ
9. Հրանտ Աշոտի Մուրադյան - Շիրակի մարզի դատախազության դատախազ
10. Հայկ Հովհաննեսի Մարտիրոսյան - Շիրակի կայազորի զինվորական դատախազության դատախազ
11. Արտաշես Նաիրիի Սահակյան - Լոռու մարզի դատախազության դատախազ
12. Արտակ Գրիգորի Խաչատրյան - Լոռու կայազորի զինվորական դատախազության դատախազ
13. Սևակ Զավենի Խաչատրյան - Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ
14. Սևադա Միհրի Սարգսյան - Սևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ
15. Մերինե Պարգևի Սահակյան - Կոտայքի մարզի դատախազության դատախազ
16. Տիգրան Գրիգորի Առաքելյան - Կոտայքի մարզի դատախազության դատախազ
17. Անի Գագիկի Հովհաննիսյան - Արմավիրի մարզի դատախազության դատախազ
18. Արմեն Գառնիկի Կարեյան - Արմավիրի մարզի դատախազության դատախազ
19. Ապրես Անդրանիկի Գրիգորյան - Արմավիրի մարզի դատախազության դատախազ
20. Արեգ Գագիկի Հարությունյան - Արմավիրի մարզի դատախազության դատախազ

21. Քրիստինե Սարգսի Կակոյան - Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ

22. Գրիգոր Վաչագանի Մղդեսյան - Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ

23. Գևորգ Տիգրանի Հակոբյան - Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազության դատախազ

24. Արմեն Աշոտի Բեգլարյան - Երևան քաղաքի դատախազության դատախազ

25. Իգոր Իսմայիլի Ալավերդյան - Երևան քաղաքի դատախազության դատախազ

26. Հայկ Վարդանի Մանասյան - Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ

27. Վաղարշակ Ալիկի Սարգսյան - Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ

28. Վանուհի Արայիկի Փայտյան- Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ

29. Լիանա Ռուբիկի Քոչարյան - Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ

30. Սերգեյ Գարեգինի Միրզոյան - Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ

31. Էդգար Կարենի Պողոսյան - Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազ

32. Ռոբերտ Կամոյի Մհերյան - Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ

33. Աննա Հայկի Հակոբյան - Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ

34. Արթուր Արամի Դանիելյան - Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ

35. Ռազմիկ Սամվելի Արսենյան - Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ

36. Դավիթ Հրաչյայի Ներսիսյան - Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների դատախազության դատախազ

37. Վարդգես Արթուրի Դաշտոյան - Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ

38. Արման Նշանի Նշանյան - ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ

39. Էդուարդ Հրայրի Հովհաննիսյան - ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ **Ա.ԴԱՎԹՅԱՆ**

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **Ա.ՄԱՐՈՒԽՅԱՆ**